

**ՁԵՌՆԱՐԿ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ ■ 2006

ՀՏԴ 347.73:336(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3
2-464

*Սույն գիրքը հրատարակվել է Համաշխարհային
Բանկի Աղքատության հաղթահարման աջակցության
ծրագրի շրջանակներում*

2-464 **Ձեռնարկ պետական ոչ առևտրային կազմակերպությունների
վերաբերյալ:**— Եր., Գար, 2006, 112 էջ:

Ձեռնարկում շարադրված են պետական ոչ առևտրային կազմակերպություններին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության նորմերը (դրանց ստեղծման, գործունեության, լուծարման կարգը, պետական գրանցումը, հարկային մարմիններում հաշվառվելը, հարկման առանձնահատկությունները, պարտադիր ապահովագրության վճարների կատարումը և այլն):

Սույն գրքի ցանկացած մաս չի բույլատրվում որևէ կերպով փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության գրավոր բույլավորության:

2 $\frac{1203020300}{0123(01)2006}$ 2006

ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3

ISBN 99941-47-16-1

© ՀՀ ԿԱ ՀՊԾ, 2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մի քանի խոսք պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավական վիճակի, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման մասին	4
2. Մի քանի խոսք լիցենզավորման մասին	6
3. Որպես հարկ վճարող և ապահովադիր հարկային մարմիններում հաշվառման կանգնելու վերաբերյալ	8
4. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների շահութահարկի հաշվարկման ու վճարման մի շարք հարցերի վերաբերյալ	9
5. ՊՈԱԿ-ը որպես հարկային գործակալ	29
6. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների կատարումը	40
7. Արժույթային օրենսդրության պահանջների կատարումը	63
8. Ավելացված արժեքի հարկը	70
9. Դրամարկղային գործառնությունները	83
10. Գույքահարկը	84
11. Հողի հարկը	90
12. Բնապահպանական և բնօգտագործման վճարները	96
13. Պետական տուրքը	101
14. Տեղական տուրքերը և վճարները	108

1.

ՄԻ ԶԱՆԻ ԽՈՍՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԴՐԱՆՑ ԱՏԵՂԾՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

ՊՈԱԿ-ը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

ՊՈԱԿ-ի սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով հանձնվող, ինչպես նաև գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից: Հիմնադրման ժամանակ հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ (բացառությամբ՝ լուծարումից հետո մնացած գույքի):

Հիմնադիրը կարող է ՊՈԱԿ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: ՊՈԱԿ-ն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման: ՊՈԱԿ-ն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը 1 տարույց ավելի չի կարող սահմանվել (բացառությամբ՝ հիմնադ-

րի կողմից սահմանված դեպքերի): Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ՊՈԱԿ-ի ստացած եկամուտները իր սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ: ՊՈԱԿ-ին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

ՊՈԱԿ-ը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

ՊՈԱԿ-ի գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

ՊՈԱԿ-ը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

ՊՈԱԿ-ն ստեղծվում է հիմնադրման, ինչպես նաև պետական հիմնարկի կամ 100% պետական մասնակցությամբ ընկերությունների վերակազմակերպման միջոցով:

ՊՈԱԿ-ի հիմնադիր կարող է հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Կառավարության:

ՊՈԱԿ-ն ստեղծվում է հիմնադրի որոշմամբ, որով սահմանվում են, մասնավորապես՝ ՊՈԱԿ-ի անվանումը, նրա գործունեության առարկան և նպատակները (այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները), սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմն ու արժեքը, ՊՈԱԿ-ի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը և նրա լիազորությունները:

Համայնքն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ստեղծել **համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)**: Համայնքի անունից ՀՈԱԿ-ն ստեղծում է համայնքի ղեկավարը: ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը և կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին: ՀՈԱԿ-ների լիազորություններն իրականացնում է համայնքի ղեկավարը:

ՊՈԱԿ-ն ենթակա է պետական գրանցման՝ օրենքով սահմանված կարգով և պետական գրանցման պահից սկսած էլ այն համարվում է ստեղծված:

ՊՈԱԿ-ը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Քաղաքացիական Օրենսգրքով սահմանված կարգով: ՊՈԱԿ-ը կարող է վերակազմակերպվել 100% պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի: ՊՈԱԿ-ը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

ՊՈԱԿ-ի լուծարմամբ գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: ՊՈԱԿ-ը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Քաղաքացիական Օրենսգրքով սահմանված կարգով: ՊՈԱԿ-ը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով: ՊՈԱԿ-ը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

ՊՈԱԿ-ի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:

2.

ՄԻ ԲԱՆԻ ԽՈՍՔ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Լիցենզիան՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է և այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ է, որը տրվում է միայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության յուրաքանչյուր տեսակով զբաղվելու համար:

Լիցենզավորումը գործընթաց է՝ կապված լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ:

Ուշադրություն. ՊՈԱԿ-ներն իրավունք ունեն զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր տեսակներով, եթե դա արգելված չէ օրենքով և եթե գործունեության նման տեսակով զբաղվելու իրավունքն ուղղակի նախատեսված է նրանց կանոնադրությամբ:

Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել (բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի):

Լիցենզիայի գործողությունը չի տարածվում լիցենզավորված անձի հետ համատեղ (այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով) գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեությամբ՝ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից:

Լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիաների գրանցամատյաններից այլ անձանց տեղեկությունների տրամադրման, ինչպես նաև այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, որակավորման քննությանը մասնակցելու համար գանձվում է **պետական տուրք**՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված են նաև **տարեկան պետական տուրքեր**:

Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար կարող են տրվել պարզ ընթացակարգով և բարդ ընթացակարգով լիցենզիաներ: Եթե «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում նշված է «Վ» տառը, ապա յուրաքանչյուր վայրում գործունեություն իրականացնելու համար տրվում է առանձին լիցենզիա:

Արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով: Առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Մասնավորապես՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը հարկային օրենսդրությամբ դիտվում է որպես **սափօրինի գործունեություն**, որի համար նախատեսված է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50%-ի չափով:

Լիցենզավորված անձի պետական գրանցման վկայականում լիցենզավորված գործունեության տեսակի մասին գրառման բացակայություները չի կարող համարվել լիցենզիայի պահանջների կամ պայմանների խախտում, ինչպես նաև չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն:

3. ՈՐՊԵՍ ԸԱՐԿ ԿՃԱՐՈՂ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ԸԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԸԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՊՈԱԿ-ները՝ որպես հարկ վճարող և ապահովադիր, սահմանված կարգով պետական գրանցում ստանալու օրվանից 1-ամսյա ժամկետում պարտավոր են հաշվառման կանգնել հարկային մարմնում ու ստանալ հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) և ապահովադրի ծածկագիր: Այդ նպատակով ՊՈԱԿ-ները դիմում են համապատասխան հարկային մարմին և լրացնում համապատասխան փաստաթղթեր: Հարկային մարմինների կողմից ՀՎՀՀ-ները և ապահովադրի ծածկագրերը գործնականում տրամադրվում են այդ փաստաթղթերը լրացնելուց հետո և հարկային մարմին մուտքագրելուց ոչ ուշ, քան 3 օրյա ժամկետում:

ՀՎՀՀ-ները պարտադիր պետք է լինեն կնիքների, իրենց կողմից կնքվող փաստաթղթերի, ներմուծման մաքսային փաստաթղթերի, հարկային մարմիններին ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների, հայտարարագրերի, տեղեկությունների վրա: ՀՎՀՀ-ն միակն է, ենթակա չէ որևէ ընթացիկ փոփոխման և կազմված է ութանիշ թվից: Ապահովադրի ծածկագիրը նույնպես կազմված է միասնական ութանիշ թվից, որը միաժամանակ նաև նրա ՀՎՀՀ-ն է:

4. ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՇՈՒԹԱՆԱՐԿԻ ԸՆԶՎԱՐԿՄԱՆ ՈՒ ԿՃԱՐՄԱՆ ՄԻ ՃԱՐՔ ԸԱՐՑԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանում շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը կարգավորվում է «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ե՞րբ են ՊՈԱԿ-ները հանդիսանում շահութահարկ վճարող

ՊՈԱԿ-ները շահութահարկ վճարող չեն հանդիսանում բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե (պետական, համայնքների) փոխանցվող եկամուտների մասով:

Բյուջետային հատկացումներին են վերաբերվում բյուջետային տարվա բյուջեների ընթացիկ ծախսերը (պետական և համայնքային հիմնարկների աշխատողների աշխատավարձը, տոկոսավճարները, սուբսիդիաները, սուբվենյիաները, դոտացիաները և ընթացիկ այլ տրանսֆերտները, ապրանքների գնման ու ծառայությունների վճարման ծախսերը), կապիտալ ծախսերը (կապիտալ ներդրումների ծախսերը, կապիտալ նորոգումների ծախսերը) և բյուջեների ներքին վարկավորումը (հանած մարումը):

Բյուջետային հատկացումներից բացի ստացվող այլ եկամուտների մասով ՊՈԱԿ-ները չեն հանդիսանալու շահութահարկ վճարող, եթե այդ եկամուտները դրանց ստացման բյուջետային տարում ամբողջությամբ փոխանցվելու (փոխանցվել) են համապատասխան բյուջե (այսինքն՝ եթե եկամուտները պետական կամ համայնքների բյուջե փոխանցումները հաստատող վճարման հանձնարարականները ակցեպտավորվել են համապատասխան բյուջեի բանկի կողմից այդ եկամուտների ստացման բյուջետային տարում):

Բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին: Բյուջետային

տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում Կառավարության որոշմամբ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը շարունակելու (եզրափակիչ շրջանառություն) դեպքում բյուջետային տարին ընդգրկելու է նաև այդ ամիսը՝ եզրափակիչ շրջանառության մեջ ներառվող բյուջետային հատկացումների և այլ եկամուտներին վերաբերող փոխանցումների մասով:

Այսպիսով՝ հաշվետու տարում ստացած այլ եկամուտները մինչև բյուջետային տարվա ավարտը պետական կամ համայնքային բյուջե ամբողջությամբ չփոխանցելու դեպքում ՊՈԱԿ-ները հանդիսանում են շահութահարկ վճարող՝ այդ եկամուտները ստանալու պահից մինչև հաշվետու տարվա վերջը:

Շահութահարկի հաշվարկման ընդհանուր հիմքը՝

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենսդրությամբ սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Հաշվապահական հաշվառման սկզբունքները և կանոնները նախատեսում են շահութահարկ վճարողի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության (հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և ընթացակարգերի ամբողջություն) և չափման հիմունքների ձևավորումը:

Հաշվապահական հաշվառման սկզբունքները և կանոնները (ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները) ձևավորվում են շահութահարկ վճարող կազմակերպության ղեկավարի կողմից՝ համապատասխան կարգադրական փաստաթղթերով (հրաման, որոշում, կարգադրություն և այլն):

Շահութահարկ վճարողները շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետում իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին գրավոր տեղեկացնում են հաշվետու տարում իրենց ընտրած հաշվապահական հաշվառման սկզբունքների և կանոնների (եթե իրավական ակտերով իրենց վերապահված է նման ընտրության իրավունք), ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին:

Յուրաքանչյուր տարում կիրառվում է հաշվապահական հաշվառման նույն քաղաքականությունը՝ փոփոխություններ կատարվում են,

երբ տեղի են ունեցել փոփոխություններ հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ, կամ երբ այդ փոփոխությունը նպաստում է ֆինանսական հաշվետվություններում դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը (մասնավորապես՝ կազմակերպության վերակազմակերպման կամ սեփականատերերի փոփոխման դեպքերում):

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հարկման նպատակով ներառում է տեղեկություններ հետևյալի վերաբերյալ՝

- հիմնական միջոցների ամորտիզացիոն ժամկետները (ամորտիզացիոն ժամկետների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում այդ ժամկետները ընդունվում են հիմնական միջոցների տվյալ խմբի (դասի) համար որոշվող ամորտիզացիոն նվազագույն ժամկետներին հավասար),
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետները (ամորտիզացիոն ժամկետների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում այդ ժամկետները ընդունվում են ոչ նյութական ակտիվների տվյալ խմբի (դասի) համար որոշվող ամորտիզացիոն նվազագույն ժամկետներին հավասար),
- դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ստեղծման մասին:

Շահութահարկով հարկվող օբյեկտը՝

ՊՈԱԿ-ների համար շահութահարկով հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթի որոշման ժամանակ ակտիվների և պարտավորությունների հաշվառումը՝

Հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները (այդ թվում՝ արտարժույթը և արտարժույթվ արտահայտված ակտիվները և պարտավորությունները) հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով (բացառությամբ՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների):

Միաժամանակ, հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում միայն «Շահութարարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահուստների (պահուստաֆոնդների) ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները:

Որ՞ն է հարկվող շահույթը

Հարկվող շահույթը դա համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում՝ նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ: Այսպիսով՝

Հարկվող շահույթ = Համախառն եկամուտ – Նվազեցումներ > 0

Համախառն եկամուտը դա՝ հաշվետու տարում բոլոր եկամուտների հանրագումարն է (անկախ դրանց ստացման աղբյուրներից):

Եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝ ապրանքների, արտադրանքի, ծառայությունների իրացումից հասույթը, այլ պաշարների (հումք և նյութեր, կիսապատրաստուկներ, արագանաչ առարկաներ), հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների իրացումից հասույթը, ընդ որում խոսքը գուտ հասույթի մասին է, առանց անուղղակի հարկերի, սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները և նախկինում դուրս գրված դեբիտորական պարտքերի մարման գումարները, պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացված եկամուտները, տուժանքները (տույժ, տուգանք), պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից և անվավեր ճանաչված գործարքներից ստացվող եկամուտները, պասիվ այլ եկամուտները (տոկոսներ, ռոյալթիներ և այլն), հաշվետու տարում հայտնաբերված և դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտը և (կամ) ավել ցույց տրված նվազեցումը և այլն:

Ուշադրություն. *Եկամուտների թվին չեն դասվում և, հետևաբար, շահութահարկ չի վճարվում՝ համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցներից, հարկային արտոնությունների գումարներից, արտարժույթի և արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքից, ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվներից և ծառայություններից: Այդ եկամուտները, ինչպես նաև բյուջետային հատկացումները չեն ներառվում ՊՈԱԿ-ների համախառն եկամտի մեջ և այդ մասով անհրաժեշտ է վարել առանձնացված հաշվառում:*

Որո՞նք են նվազեցումները՝

Օրենքով սահմանված են նվազեցումների հետևյալ տեսակները՝
ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ: Այսպիսով՝

Նվազեցումներ = Ծախսեր + Կորուստներ + Այլ նվազեցումներ

Ծախսերը՝

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Ծախսերը համարվում են անհրաժեշտ, եթե անմիջականորեն և բացառապես կապված են ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման հետ, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսեր:

Ծախսը համարվում է փաստաթղթերով հիմնավորված, եթե ձեռքբերումը (ծախսումը) փաստաթղթերով հիմնավորված է: Միակ բացառությունը սահմանված է Հայաստանի Հանրապետության տարածքում օրապահիկի և դաշտային բավարարման գծով կատարված ծախսերի համար, որոնք սահմանված չափի սահմաններում կարող են նվազեցվել համախառն եկամտից՝ առանց հիմնավորող փաստաթղթերի:

Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են Կառավարության 25.08.1998թ. N 525 որոշմամբ:

Ուշադրություն. *Մինչև 1,0 մլն. դրամ գումարի չափով հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով ձևակերպված ձեռքբերումը դիտվում է որպես փաստաթղթերով հիմնավորված ծախս:*

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝ նյութական ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ և ընթացիկ ծախսերը, աշխատողների հավաքագրման ծախսերը, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները, սոցիալական վճարները, չփոխհատուցվող (չհաշվանցվող) հար-

կերը, տուրքերը, և այլ պարտադիր վճարները, գովազդային, մարքեթինգի, ներկայացուցչական, գործուղման, կադրերի պատրաստման (վերապատրաստման) ծախսերը, դատական, աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը, բնական պաշարների արդյունահանման նախապատրաստական, երկրաբանական հետախուզման և նախագծահետազոտական աշխատանքների ծախսերը (որոնք ամորտիզացվում են ոչ նյութական ակտիվների համար օրենքով սահմանված կարգով), գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերը և այլն:

Ծախսերի որոշ տեսակներ (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված գովազդի, մարքեթինգի, գործուղման, կադրերի պատրաստման (վերապատրաստման) ծախսերը, ներկայացուցչական ծախսերը և այլն) թույլատրվում է նվազեցնել համախառն եկամտի Կառավարության սահմանած չափի սահմաններում: Այդ առավելագույն թույլատրվող չափերը սահմանված են Կառավարության 27.11.1998թ. N 753 որոշմամբ:

Հիմնական միջոցների ամորտիզացիան հաշվարկվում է ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն հետևյալ նվազագույն ժամկետներից՝

- | | |
|----------|---|
| 20 տարի՝ | շենքեր (շինություններ) և փոխանցող հարմարանքներ, |
| 10 տարի՝ | հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքեր (շինություններ), |
| 3 տարի՝ | չնշված հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի համար |
| 1 տարի՝ | հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար |
| 5 տարի՝ | այլ հիմնական միջոցներ: |

Մինչև 50,0 հազ. դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 1 տարի: Աղետի գոտու և Գ-յումրի քաղաքի համար նախատեսված է արագացված ամորտիզացիա (1 տարի)՝ ոչ միայն հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար:

ՊՈԱԿ-ները իրենց հայեցողությամբ կարող են ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետներ, սակայն տվյալ խմբի համար նշված ժամկետներից ոչ պակաս: Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական (կամ՝ օրենքով սահմանված կարգով վերագնահատվող) արժեքի և հիմնական միջոցի տվյալ խմբի համար սահմանված ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն: Կարճաժամկետ (գործառնական) վարձակալության դեպքում ամորտիզացիոն մասհանումները կատարում է վարձատուն, իսկ երկարաժամկետ (ֆինանսական) վարձակալության դեպքում՝ վարձակալը: Վարձակալված պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդն չի նվազեցվում:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում են ՊՈԱԿ-ները՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից, իսկ որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 10 տարի (սակայն ոչ ավելի ՊՈԱԿ-ի գործունեության ժամկետից): Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքի և ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն:

Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգումը (հասկացությունը) սահմանված է Կառավարության 03.06.2002թ. N 677 որոշմամբ: Այդ որոշման դրույթները տարածվում են ամմիջականորեն կազմակերպության կատարած, ինչպես նաև իր կողմից պատվիրված գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա: Այդ աշխատանքների գծով վարվում է առանձնացված հաշվառում:

Գիտահետազոտական աշխատանքներ են համարվում գիտական հետազոտություններն ու մշակումները, որոնք իրականացվում են ձեռք բերված գիտելիքների ընդլայնման և նոր գիտելիքների ստացման ու կիրառման նպատակով, ներառյալ՝ հիմնարար գիտական հետազոտությունները և կիրառական գիտական հետազոտությունները:

Փորձակոնստրուկտորական աշխատանքներ են համարվում ինժեներական օբյեկտի կամ տեխնիկական համակարգի որոշակի կոնստրուկցիայի մշակումը, գծագրի կամ նշանային միջոցների այլ համակարգի մակարդակով նոր օբյեկտի մտահղացումների և տարբերակների մշակումը, տեխնոլոգիական պրոցեսների մշակումը, այդ բովում՝ արտադրանքի կամ տեխնոլոգիայի այլընտրանքների գնահա-

տումը, արտադրանքի փորձանմուշների նախագծումը, կառուցումը և փորձարկումը, նոր տեխնոլոգիաների կիրառմամբ՝ գործիքների, ձուլանայրերի, կաղապարների և դրոշմոցների նախագծումը:

Փորձահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներում չեն ներառվում, մասնավորապես՝ կրթությունը և կադրերի պատրաստումը (վերապատրաստումը), մարքեթինգային գործունեությունը, ընդհանուր նշանակության տեղեկությունների հավաքումը և մշակումը, ստանդարտացումը, մասնագիտացված բժշկական ծառայությունները, գոյություն ունեցող ծրագրային ապահովման հարմարեցումը (ադապտացումը, պահպանումը և ուղեկցումը), արտադրության պրոցեսում նորանուծությունների ներդրումը, կառավարումը, սոյիլոգիական և այլ հարցումների անցկացումը, դրանց արդյունքների ամփոփումը և առաջարկությունների մշակումը, գործող օրենսդրության ու վիճակագրական տվյալների վերլուծությունը, ինովացիոն գործունեությունը:

Հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերն ըստ ընթացիկ և կապիտալ բնույթի տարբերակման հայտանիշների և չափերի սահմանված են Կառավարության 11.04.2000թ. N 161 որոշմամբ: Համաձայն այդ որոշման, հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են կապիտալ ծախսեր, եթե դրանց արդյունքում վերակառուցման, վերազինման, արդիականացման, հիմնանորոգման կամ ընդլայնման միջոցով վերափոխվում է հիմնական միջոցների վիճակը և (կամ) տվյալ հիմնական միջոցի վրա հաշվետու տարվա ընթացքում կատարված ծախսերի մեծությունը գերազանցում է այդ հիմնական միջոցի սկզբնական արժեքի (օրենքով սահմանված կարգով իրականացված վերազնահատման դեպքում՝ վերազնահատված արժեքի) 10%-ը: Այդ հայտանիշներին և (կամ) չափերին չհամապատասխանելու դեպքում հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համարվում են ընթացիկ ծախսեր:

Հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են տվյալ ամսվա 1-ի դրությամբ այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (մնացորդային արժեքին, որը հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերությունն է՝ հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերազնահատման արդյունքները) և այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է օրենքով սահմանված կարգին համապատասխան: Ընդ որում՝

ա) եթե կապիտալ բնույթի ծախսը < ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքից

ապա՝

այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է ամորտիզացիոն մնացորդային ժամկետում.

բ) եթե կապիտալ բնույթի ծախսը > ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքից և այդ հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը < 5 տարի

ապա՝

այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է ամորտիզացիոն մնացորդային ժամկետում (բայց ոչ պակաս տվյալ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից).

գ) եթե կապիտալ բնույթի ծախսը > ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքից և այդ հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը ≥ 5 տարի

ապա՝

այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է ամորտիզացիոն մնացորդային ժամկետում (բայց ոչ պակաս, քան 5 տարվա ընթացքում):

Օրինակ. Հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքը կազմում է 7,2 մլն. դրամ, 01.01.2004թ. դրությամբ հաշվարկված ամորտիզացիան կազմում է 4,8 մլն. դրամ և հաշվեկշռային (մնացորդային) արժեքը՝ 2,4 մլն. դրամ (7,2-4,8): Հիմնական միջոցի ամորտիզացիոն ժամկետը սահմանված է 3 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետի չափով): Հիմնական միջոցի վրա կատարվել են կապիտալ բնույթի ծախսեր (2004 թ. հուլիսի 15-ին կազմված կատարողական ակտի հիման վրա) 3,3 մլն. դրամի չափով:

Տվյալ դեպքում հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ավելացվում են այդ հիմնական միջոցի 01.07.2004թ. դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքին և հիմնական միջոցը ամորտիզացվում է ամորտիզացիոն նվազագույն ժամկետում:

2004թ. հունվար-հունիս ամիսների համար հաշվարկված ամորտիզացիան ամսական կազմում է 0,2 մլն. դրամ (7,2:3:12), իսկ դրանց հանրագումարը՝ 1,2 մլն. դրամ (0,2×6): 01.07.2004թ. դրությամբ (մինչև կապիտալ բնույթի ծախսերի կատարումը) հիմնական միջոցի հաշվեկշռային (մնացորդային) արժեքը կազմում է 1,2 մլն. դրամ (2,4-1,2), իսկ ամորտիզացիոն մնացորդային ժամկետը՝ 6 ամիս:

2004թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների համար ամորտիզացիան ամսական կազմելու է 0,125 մլն. դրամ ((1,2+3,3):3:12), իսկ դրանց հանրագումարը՝ 0,75 մլն. դրամ (0,125×6): Ընդամենը տարեկան ամորտիզացիան կազմում է 1,95 մլն. դրամ (1,2+0,75):

2005-2006թթ. համար տարեկան ամորտիզացիան կազմելու է 1,5 մլն. դրամ ((1,2+3,3):3), իսկ 2007թ. (հունվար-հունիս) համար՝ 0,75 մլն. դրամ ((1,2+3,3):3:12×6):

Այսպիսով՝ հիմնական միջոցը լրիվ ամորտիզացվում է 5.5 տարում (մինչև կապիտալ բնույթի ծախսի կատարումը հաշվառված ամորտիզացիոն ժամկետի (2.5 տարի) և ամորտիզացիոն նվազագույն ժամկետի (3 տարի) հանրագումար):

Նույն օրինակում, եթե հիմնական միջոցի սկզբնական ամորտիզացիոն ժամկետը կազմակերպության կողմից սահմանվել 7 տարի (ամորտիզացիոն նվազագույն ժամկետից ավել), ապա 01.07.2004թ. դրությամբ (մինչև կապիտալ բնույթի ծախսերի կատարումը) ամորտիզացիոն մնացորդային ժամկետը կազմելու է 4.5 տարի (7-2.5) և հիմնական միջոցը 2004թ. հուլիսի 1-ից հետո ամորտիզացվելու է 7 տարում (2.5+4.5):

Նույն օրինակում, 01.01.2004թ. դրությամբ լրիվ ամորտիզացված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կամորտիզացվեն 3 տարում (ամորտիզացիոն նվազագույն ժամկետում):

Ուշադրություն. Քանի որ՝

ա) գործող օրենսդրությամբ ՊՈԱԿ-ներին նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը հատկացվում է անժամկետ և անհատույց օգտագործման իրավուն-

քով, ապա ամրակցված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների մասով համախառն եկամտից նվազեցումներ չեն կատարվում, իսկ դրանց վրա կատարված ծախսերը (ընթացիկ, կապիտալ) հաշվի են առնվում վարձակալի համար վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) համար սահմանված կարգով:

- բ) ծախսերի թվին չեն դասվում արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերազնահատման բացասական արդյունքը, ՊՈԱԿ-ների անհատույ ստացված ակտիվների գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը,

ապա այդ ծախսերը և բյուջետային հատկացումներից կատարված ծախսերը չեն նվազեցվում համախառն եկամտից ու այս մասով անհրաժեշտ է վարել առանձնացված հաշվառում:

Ե՞րբ են իրականացվում ծախսերի գծով նվազեցումները

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումները կատարվում են հետևյալ ձևով՝

- ա) արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի (նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովագրության, արտադրական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության վերջված հիմնական միջոցների գծով), նորոգում և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան:
- բ) այլ ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ) մնացորդային արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ակտիվների իրացմանը համապատասխան:
- գ) գործունեության հետ կապված վարչական ծախսերի, արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի, ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի, գործառնական այլ ծախսերի և ինվեստիցիոն ծախսերի, ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի (այսուհետ՝ ժամանա-

կաշրջանի ծախսեր) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (որի ընթացքում դրանք կատարվել են):

Վարչական ծախսերն են՝ կառավարման ապարատի աշխատավարձի, պարտադիր սույնիալական սպահովագրության, գործուղումների, նյութական և տրանսպորտային սպասարկման, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորոգման, պահպանման և շահագործման, ներկայացուցչական, դատական, աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների, կադրերի (վերա)պատրաստման, աշխատուժի հավաքագրման հետ կապված ծախսերը, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծառայությունների հետ կապված ծախսերը:

Արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի օրինակներն են՝ փաթեթավորման, պահպանման, բեռնման, տեղափոխման, ուղեկցման, գովազդի, մարքեթինգի ծախսերը:

Ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի օրինակներն են՝ գյուտարարական և ռաջիոնալիզատորական, գիտահետազոտական, նախագծային, փորձակոնստրուկտորական աշխատանքների ծախսերը:

Գործառնական այլ ծախսերի օրինակներն են՝ կոնսերվացված արտադրական հզորությունների և օբյեկտների պահպանման, կարճաժամկետ արժեթղթերի իրացման, հումքի, նյութերի իրացման հետ կապված ծախսերը:

Ինվեստիցիոն ծախսերի օրինակներն են՝ երկարաժամկետ ակտիվների իրացման և այլ օտարման ծախսերը:

Ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերի օրինակներն են՝ վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների հաշվարկված տոկոսներ, վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների ստացման հետ կապված ծախսեր, գույքի ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսներ և վարձակալության հետ կապված այլ ծախսեր, արժեթղթերի թողարկման և տարածման հետ կապված ծախսեր:

Կորուստները՝

Կորուստները դասակարգվում են հետևյալ տեսակների՝

- բնական կամ փաստացի այլ կորուստներ,
- պատահական կորուստներ:

Գույքի բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, որոնք բացահայտվում են գույքի մթերման, պահպանման և իրացման պրոցեսում:

Բնական կամ փաստացի այլ կորուստները համախառն եկամտից նվազեցվում են նորմաների (չափերի) սահմաններում, դրանց տեղի ունենալու կամ հայտնաբերվելու տարվա ընթացքում, իսկ նորմաների (չափերի) բացակայության դեպքում այդ կորուստները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Կորուստները պետք է բավարարեն հիմնավորվածության պայմաններին, այսինքն՝ համախառն եկամտից նվազեցման ենթակա են միայն փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստները: Բնական կամ փաստացի այլ կորուստների նորմաներ (չափեր) սահմանված չլինելու կամ դրանք գերազանցող կորստի դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է այդ կորստի չափով՝

- վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ (կամ մաս-մաս) կանոնվին հատուցելու դեպքում՝ կորստի ամբողջական (կամ մաս-մաս) հատուցման տարում, կամ՝
- վնաս պատճառած անձին չպարզելու հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ վերջինիս ընդունման տարում, կամ՝
- անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու տարում:

Համախառն եկամուտը նվազեցվում է նաև գույքի պատահական կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ այն հայտնաբերվելու տարվա ընթացքում:

Որպես պատահական կորուստ է ընդունվում գույքի (շենքեր, շինություններ և այլ հիմնական միջոցներ, ապրանքանյութական պաշարներ և այլ նյութական արժեքներ) փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը (ոչնչացումը, վնասումը կամ որակական հայտանիշների անկումը), որը տեղի է ունենում հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների, ինչպես նաև օրենսդրության փոփոխության (գործունե-

ության տեսակի արգելում, ազգայնացում և այլն) հետևանքով (ներառ-
յալ՝ տարերային աղետների հետևանքների կանխման կամ վերացման
հետ կապված ծախսերը):

Այլ նվազեցումները՝

Այլ նվազեցումների թվին են դասվում, մասնավորապես՝

- անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար Կառավարության սահմանած կարգով՝ պահուստին (պահուս-
տաֆոնդին) կատարվող մասհանումները, իսկ այդ պարտքերի
դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին
(պահուստաֆոնդին) կատարված մասհանումները գերազան-
ցող գումարը,
- Կառավարության սահմանած կարգով դուրս գրված անհուսալի
կրեդիտորական պարտքերի մարման գումարները,
- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նա-
խորդող 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտը կամ պա-
կաս ցույց տրված նվազեցումը.
- ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին,
թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօ-
թիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգե-
բուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվան-
դանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապ-
րանք, դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայու-
թյունների արժեքը (բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի
0.25%-ը),
- նախորդ տարիներին առաջացած վնասները (բացառությամբ՝
կազմակերպությունների միացման, միաձուլման և վերակազ-
մավորման ձևով վերակազմակերպման դեպքերի): Վնասը նվա-
զեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ:
Ընդ որում՝ նախորդ տարիներին գործունեությունից վնաս ունե-
նալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան
հաջորդող 5 տարիներ,
- վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշ-
վարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճա-
րումների 150%-ը (նվազեցումը կատարվում է աշխատավարձի և
դրան հավասարեցված այլ վճարումների մասով ծախսերից ան-

կախ): Այդ նվազեցումը իրականացնելիս, որպես վարձու աշխատող հաշմանդամներ, բացի հիմնական գործունեության մեջ ներգրավված հաստիքային աշխատող հաշմանդամներից, ներառվում են նաև համատեղության կարգով այլ կազմակերպություններից աշխատանքի ընդունված հաշմանդամները և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատանքներ կատարող հաշմանդամները:

Շահութահարկի հաշվարկման նպատակով (բացառությամբ՝ բանկերի համար) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ(աֆոնդ)ի ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրս գրման կարգը հաստատված է Կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ:

Դեբիտորական պարտքը՝ կազմակերպությանն այլ անձանց (դեբիտորների) կողմից վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է: **Կրեդիտորական պարտքը** (այդ թվում՝ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների, շահաբաժինների գծով)՝ կազմակերպության կողմից այլ անձանց (կրեդիտորների) վճարման (այլ ձևով հատուցման) ենթակա պարտքի գումարն է:

Ուշադրություն. Եթե դեբիտորի պարտքի գումարը կազմակերպությանը չի գերազանցում 100,0 հազ. դրամը, ապա այն կետանցված դառնալու 366-րդ օրվանից ճանաչվում է անհուսալի, հակառակ դեպքում (100,0 հազ. դրամը գերազանցելու դեպքում) դեբիտորական պարտքը ճանաչվում է անհուսալի միայն այդ պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ դատարանի համապատասխան վճռի առկայության դեպքում, և երկրորդը՝ դեբիտորական պարտքը կարող է ճանաչվել անհուսալի պարտապանի սահմանված կարգով անվճարունակ (սնանկ) ճանաչվելու կամ պարտապան կազմակերպության լուծարվելու (պարտապան ֆիզիկական անձի մահվան) դեպքում (անկախ պարտքի մարման ժամկետից):

Հարկային հաշվառումը՝

Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով՝ ելնելով կազմակերպության կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից (անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից) և հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

- եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է կազմակերպությանը անվերապահ վճարման (հատուցման) կամ կազմակերպությունը կատարել է գործարքի (կամ պայմանագրի) բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս,
- կազմակերպության կողմից ծառայություններ մատուցվելու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից,
- տոկոսների տեսքով եկամուտները ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված պարտքի ժամկետը լրանալու պահից (եթե պարտքի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան),
- գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներ ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալու պահից (եթե վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան):

Շահութահարկի դրույքաչափը՝

Շահութահարկի դրույքաչափը սահմանված է 20%: Այսինքն՝

$$\text{Շահութահարկ} = \text{Հարկվող շահույթ} \times 20\%,$$

որը որոշվում է յուրաքանչյուր տարվա արդյունքներով և ենթակա է վճարման պետական բյուջե մինչև հաշվետու տարվանը հաջորդող տարվա ապրիլի 25-ը (ներառյալ):

Կանխավճարները և նվազագույն շահութահարկի վճարումները՝

Եթե հաշվետու տարում ՊՈԱԿ-ները դառնում են շահութահարկ վճարող, ապա հաշվետու տարվա ընթացքում պարտավոր են կատարել *շահութահարկի անսական վճարումներ՝ շահութահարկի կանխավճարի և նվազագույն շահութահարկի անսական գումարի առավելա-*

գույնի չափով: Շահութահարկի ամսական վճարման գումարները վճարվում են յուրաքանչյուր ամիս՝ տվյալ ամսվա 25-ից ոչ ուշ:

Շահութահարկի կանխավճարների գումարը որոշվում է նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 1/16-րդ չափով, եթե նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցել է 500,0 հազ. դրամը: Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարվում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով: Նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալուց հետո շահութահարկի հաշվարկի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացումը տվյալ տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ տարվա սկզբից աճող հանրագումարով և նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 1/16-ի չափով:

Նվազագույն շահութահարկի ամսական գումարները հաշվարկվում են նախորդ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտից (առանց անուղղակի հարկերի) և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50%-ը չգերազանցող մասով՝ շահութահարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ 1%-ի չափով: Նվազագույն շահութահարկի ամսական գումարները վճարվում են նաև այն դեպքերում, երբ կազմակերպությունը նախորդ տարում ունեցել է հարկային վնաս կամ նախորդ տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը չի գերազանցել 500,0 հազ. դրամը:

Բերենք օրինակներ՝ կապված շահութահարկի կանխավճարների և նվազագույն շահութահարկի վճարման հետ: Ընդունենք, որ ՊՈԱԿ-ը 2005թ. ընթացքում համարվել է շահութահարկ վճարող և բյուջետային հատկացումներից բացի այլ եկամուտները ստացել է 2005թ. հունվար ամսվանից սկսած:

Օրինակ. ՊՈԱԿ-ի 2004թ. հաշվարկված շահութահարկի կանխավճարների գումարը կազմել է 100,0 հազ. դրամ: ՊՈԱԿ-ը 2005թ. մարտի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2004թ. հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ և շահութահարկի հաշվարկը, ըստ որի 2004թ. հաշվարկված շահութահարկի գումարը կազ-

մել է 1920,0 հազ. դրամ: Ընդունենք, որ ՊՈԱԿ-ի 2005թ. հունվար-դեկտեմբեր ամիսների նվազագույն շահութահարկի ամսական գումարը կազմում է 130,0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում, 2005թ. շահութահարկի կանխավճարի ամսական գումարը կազմում է 120,0 հազ. դրամ (1920,0:16): ՊՈԱԿ-ը 2005թ. ընթացքում շահութահարկի ամսական վճարման գումարների վճարումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 26.01.2004թ. և 25.02.2004թ.՝ ամսական 100,0 հազ. դրամ,
- 25.03.2004թ.՝ 160,0 հազ. դրամ ($120,0+(120,0-100,0)\times 2$),
- 26.04.2004թ., 25.05.2004թ., 25.06.2004թ., 26.07.2004թ., 25.08.2004թ., 27.09.2004թ., 25.10.2004թ., 25.11.2004թ., 27.12.2004թ.՝ ամսական 130,0 հազ. դրամ ($130,0 > 120,0$):

Օրինակ. ՊՈԱԿ-ի 2004 թ. հաշվարկված շահութահարկի կանխավճարների գումարը կազմել է 100,0 հազ. դրամ: ՊՈԱԿ-ը 2005 թ. մարտի 10-ին հարկային մարմին ներկայացրել է 2004թ. հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ և շահութահարկի հաշվարկը, ըստ որի 2004 թ. հաշվարկված շահութահարկի գումարը կազմել է 1280,0 հազ. դրամ: Ընդունենք, որ ՊՈԱԿ-ի 2005թ. հունվար-դեկտեմբեր ամիսների նվազագույն շահութահարկի ամսական գումարը կազմում է 110,0 հազ. դրամ:

Տվյալ դեպքում, 2005թ. շահութահարկի կանխավճարի ամսական գումարը կազմում է 80,0 հազ. դրամ (1280,0:16): ՊՈԱԿ-ը 2005թ. ընթացքում շահութահարկի ամսական վճարման գումարների վճարումները կատարում է հետևյալ ժամկետներում և չափերով.

- 25.01.2005թ. և 25.02.2005թ.՝ ամսական 110,0 հազ. դրամ (110,0 > 100,0),
- 25.03.2005թ.՝ 110,0 հազ. դրամ ($110,0 > (80,0+(80,0-100,0)\times 2)$),
- 25.04.2005թ., 25.05.2005թ., 27.06.2005թ., 25.07.2005թ., 25.08.2005թ., 26.09.2005թ., 25.10.2005թ., 25.11.2005թ., 26.12.2005թ.՝ ամսական 110,0 հազ. դրամ ($110,0 > 80,0$):

Սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի հաստատած սակագներ կիրառող կազմակերպությունների, առողջապահության և կրթության ոլորտներում ծառայություններ մատուցող կազմակերպությունների, թերթերի և ամսագրերի տպագրության և իրացման, ինչպես նաև թանկարժեք քարերի մշակման ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար Կառավարու-

քյունը 14.04.2004թ. N 549-Ն որոշմամբ սահմանել է նվազագույն շահութահարկի ամսական գումարի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ: Համաձայն այդ որոշման, կրթության և առողջապահության ոլորտում գործունեություն իրականացնող ՊՈԱԿ-ները այդ մասով նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ չեն կատարում:

Նվազագույն շահութահարկի տարեկան հանրագումարի և հաշվետու տարվա փաստացի շահութահարկի դրական տարբերությունը նվազեցվում է հետագա տարիների շահութահարկից:

Ուշադրություն. ՊՈԱԿ-ները կանխավճարներ և նվազագույն շահութահարկի ամսական վճարումներ չեն կատարում՝ մինչև շահութահարկով հարկվող եկամուտներ ստանալը ընկած ժամանակահատվածը: Դա նշանակում է, որ՝

- եթե ՊՈԱԿ-ը բյուջետային հատկացումներից բացի այլ եկամուտներ (օրինակ՝ ծառայությունների մատուցումից) ստացել է 12.04.2005թ.-ից սկսած և բյուջետային տարվա վերջում այդ եկամուտները չի փոխանցել բյուջե, հետևաբար, 2005թ. համար ՊՈԱԿ-ը համարվել է շահութահարկ վճարող, ուստի շահութահարկի կանխավճարների (եթե 2004թ. շահութահարկի գումարը գերազանցել է 500,0 դրամը) առաջին վճարումը ՊՈԱԿ-ի կողմից կատարվելու է 25.04.2005թ.-ից ոչ ուշ, իսկ նվազագույն շահութահարկի ամսական առաջին վճարումը կատարվելու է 25.05.2005թ.-ից ոչ ուշ,
- եթե ՊՈԱԿ-ը բյուջետային հատկացումներից բացի այլ եկամուտներ (օրինակ՝ ծառայությունների մատուցումից) ստացել է 29.04.2005թ.-ից սկսած և բյուջետային տարվա վերջում այդ եկամուտները չի փոխանցել բյուջե, հետևաբար, 2005թ. համար ՊՈԱԿ-ը համարվել է շահութահարկ վճարող, ուստի նվազագույն շահութահարկի ամսական վճարումների և շահութահարկի կանխավճարների (եթե 2004թ. շահութահարկի գումարը գերազանցել է 500,0 դրամը) առաջին վճարումը ՊՈԱԿ-ի կողմից կատարվելու է 25.05.2005թ.-ից ոչ ուշ:

Ֆինանսական հաշվետվությունների, շահութահարկի հաշվարկի ներկայացումը՝

ՊՈԱԿ-ները յուրաքանչյուր տարվա արդյունքներով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում են շահութահարկի հաշվարկ (եթե այդ հաշվետու տարում համարվել են շահութահարկ

վճարող), ինչպես նաև հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ:

ՊՈԱԿ-ը հնարավորություն ունի ճշտելու հարկային մարմին արդեն իսկ ներկայացված շահութահարկի հաշվարկների տվյալները երկու ձևով՝

- եթե նախորդ հաշվետու տարիների համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում կատարվել են հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից չբխող սխալներ և պահանջում են միայն հարկային ճշգրտումներ, ապա ՊՈԱԿ-ը կարող է հարկային մարմին ներկայացնել շահութահարկի ճշտված հաշվարկ, որի հիման վրա սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ,
- եթե նախորդ հաշվետու տարիների համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում կատարվել են «հաշվապահական սխալներ», ապա ՊՈԱԿ-ը կարող է հաշվապահական հաշվառման մեջ տալ համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ պահել իր հաշվառման վայրի հարկային մարմին, որպեսզի հետագայում հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ժամանակ ՊՈԱԿ-ի նկատմամբ չկիրառվեն հարկվող շահույթը թաքցնելու (կամ պակաս ցույց տալու), ինչպես նաև շահութահարկի հաշվարկներում հարկային վնասն ավելի ցույց տալու համար օրենսդրությամբ սահմանված տուգանքները:

Շահութահարկի ճշտված հաշվարկներ չեն ներկայացվում հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո՝ ստուգմամբ ընդգրկված տարիների համար: Ստուգված տարիների համար շահութահարկի գծով պարտավորությունները կարող են ճշտվել միայն ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Ուշադրություն. *ՊՈԱԿ-ները, որոնք բյուջետային հատկացումներից բացի ստացել են միայն եկամտի չհամարվող տարրեր, կարող են տվյալ տարվա համար շահութահարկի հաշվարկ չլրացնել և հարկային մարմիններ չներկայացնել:*

Օտարերկրյա պետություններում ստացված եկամատիքի վճարված շահութահարկի գումարի հաշվանցումը՝

Հայաստանի Հանրապետությունում գանձվող շահութահարկը նվազեցվում (պակասեցվում) է շահութահարկի այն գումարի չափով, որը գանձվել է ՊՈԱԿ-ից օտարերկրյա պետություններում իրենց օրենսդրությանը համապատասխան, իրենց պետության տարածքում ստացված շահույթից (եկամտից): Ընդ որում՝ նվազեցվող շահութահարկի գումարը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված շահույթից (եկամտից) Հայաստանում վճարման ենթակա շահութահարկի գումարին: Եթե նվազեցման ենթակա գումարը գերազանցում է տվյալ հաշվետու տարվա արդյունքներով առաջացած շահութահարկի պարտավորությանը, ապա գերազանցող գումարը նվազեցվում է հաջորդ տարիների շահութահարկի գումարից:

Նման նվազեցումների իրականացման համար հիմք են հանդիսանում կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարների վերաբերյալ համապատասխան տեղեկանքները (կամայական ձևով կազմված, սակայն վճարված հարկի գումարների վերաբերյալ տեղեկություններ պարունակող), որոնք պետք է վավերացված լինեն այդ պետությունների հարկ գանձող համապատասխան մարմինների կողմից:

5. ՊՈԱԿ-Ը ՈՐՊԵՏ ԸՆՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ

Շահութահարկի գծով՝

ՊՈԱԿ-ները ոչ ռեզիդենտ կազմակերպություններին (դրանք են՝ օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները) եկամուտներ վճարելիս պարտավոր են կատարել հարկային գործակալի ֆունկցիա, այսինքն՝ ոչ ռեզիդենտներին եկամուտներ վճարելիս նրանց եկամուտներից պահել (գանձել) և բյուջե փոխանցել շահութահարկը՝

- եթե վճարված եկամուտները համապատասխանում են հայաստանյան աղբյուրներից վճարված եկամուտների հասկացությա-
նը,
- եկամուտները վճարվել են, այլ ոչ թե հաշվեգրվել:

Վճարված եկամուտները հայաստանյան աղբյուրներին վերագրե-
լու համար կիրառվում է տարածքային սկզբունքը (այսինքն՝ եկամուտ-
ները պետք է ստացված լինեն Հայաստանի Հանրապետության տա-
րածքում), ընդ որում՝ քանի դեռ հարկային գործակալը չի հիմնավորում
եկամուտների առաջացման աղբյուրները, դրանք դիտվում են որպես
հայաստանյան աղբյուրներից վճարված:

Ուշադրություն. Չնայած, որ արտաքին տնտեսական գործունեու-
թյունը (ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող
ապրանքները Հայաստանի Հանրապետության ներկրելու հետ
կապված գործունեություն, որի դեպքում հայկական կազմակերպու-
թյունը ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի
Հանրապետության պետական սահմանը հատելը, որը հիմնավոր-
վում է համապատասխան մաքսային փաստաթղթերով և տվյալ գոր-
ծառնությունում բացակայում են ձեռնարկատիրական գործակալ-
միջնորդները) վերագրվում է հայաստանյան աղբյուրներին, սակայն
Հայաստանի Հանրապետությունում այդ եկամուտները շահութա-
հարկով հարկման ենթակա չեն:

Ոչ ռեզիդենտին հայաստանյան աղբյուրներից եկամուտներ վճարե-
լու դեպքում հարկային գործակալի կողմից չի իրականացվում կատար-
ված ծախսերի չափով նվազեցում (բացառությամբ՝ գույքի հավելածի
ձևով վճարվող եկամուտներին, որի դեպքում հայաստանյան աղբյուրնե-
րից եկամուտները որոշվում են ոչ ռեզիդենտի կողմից գույքի օտարման
և ձեռքբերման գների դրական տարբերությունը (հավելածը)):

Որպես եկամտի փաստացի վճարում դիտվում են ոչ միայն դրա-
մական վճարումները (կանխիկ կամ անկանխիկ), այլև բնամթերային
(այդ թվում՝ փոխանակման գործարքների միջոցով) վճարումները, ինչ-
պես նաև ոչ ռեզիդենտի և հարկային գործակալի միջև կատարված
հաշվանցումները, որոնց արդյունքում նվազում է հարկային գործակա-
լի պարտավորությունը տվյալ ոչ ռեզիդենտի նկատմամբ:

Եկամտի վճարման աղբյուրի մոտ շահութահարկ չի պահվում, եթե՝

- այդ եկամուտները վճարվել են ոչ ռեզիդենտի առանձնացված
ստորաբաժնմանը (մասնաճյուղ, ներկայացուցչություն),

- հայաստանյան աղբյուրներից եկամուտներ վճարվում են ոչ ռեզիդենտին, որի գրանցման (ինկորպորացիայի) երկրի հետ գործում է կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ Համաձայնագիր, ըստ որի վճարված եկամուտների մասով հարկերը վճարվում են ոչ ռեզիդենտի գրանցման (ինկորպորացիայի) երկրում (համապատասխան սերտիֆիկատ-դիմումի առկայության դեպքում):

Հարկային գործակալները՝

- ոչ ռեզիդենտին հայաստանյան աղբյուրներից եկամուտներ վճարելիս եկամտի վճարման աղբյուրի մոտ շահութահարկը պահում են՝

5 %՝	եթե դրանք ապահովագրական հատույումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտներ են,
10%՝	մնացած բոլոր եկամուտներից,

- պահված (գանձված) շահութահարկի գումարը ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ վճարում են պետական բյուջե,
- եռամսյակը մեկ (հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ) սահմանված ձևով իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին ներկայացնում են ամփոփ հաշվարկ (անցած եռամսյակում ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին): Ընդ որում՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ամփոփ հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող են հարկային մարմին ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո՝ հարկային գործակալների կողմից հարկային մարմիններ ներկայացվող ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկների ճշտում չի իրականացվում,

- հարկային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվություն են կրում սահմանված ընդհանուր կարգով:

Եկամտահարկի գծով՝

ՊՈԱԿ-ները ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս, որպես հարկային գործակալ, այդ եկամուտներից պետք է հաշվարկեն, պահեն և պետական բյուջե փոխանցեն եկամտահարկը: Ընդ որում՝ եկամուտները կարող են վճարվել ինչպես դրամական (կանխիկ կամ անկանխիկ), այնպես էլ բնամթերային (ոչ դրամական) ձևով: Բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտներ վճարելիս այդ եկամուտները հաշվի են առնվում պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազատ (շուկայական) գներով՝ Կառավարության 02.07.2001թ. N 590 որոշմամբ սահմանված կարգով: Բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտները կարող են լինել՝ գույք (բացառությամբ՝ դրամական միջոցների), աշխատանք (ծառայություն) և մտավոր սեփականություն:

Բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտները հաշվի են առնվում՝

- եկամուտ վճարողի կողմից եկամտի վճարման ամսում այլ անձանց դրանց իրացման միջին գներով (այդ թվում՝ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերը),
- այդպիսի գների բացակայության դեպքում՝ եկամուտ վճարողի կողմից վճարմանը նախորդող ամսում այլ անձանց դրանց իրացման միջին գներով (այդ թվում՝ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերը),
- այդպիսի գների բացակայության դեպքում՝ եկամուտ վճարողի կողմից ինքնարժեքի (սկզբնական (ձեռքբերման) արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարով:

Ուշադրություն. Եթե Հայաստանի Հանրապետության անումից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում ծրագրեր իրականացնող կազմակերպություններն ազատվում են ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից աղբյուրի մոտ եկամտահարկի պահումից, ապա ծրագիր իրականացնող կազմակերպությունները կարող են, իրենց հայեցողությամբ, հարկային մարմիններ ներկայացվող գրավոր հայտարարության հիման վրա հանդես գալ որպես հարկային գործակալ և իրականացնել ֆիզի-

կական անձանց վճարվող եկամուտներից եկամտահարկի պահում: Այս դեպքում հարկային գործակալը եկամտահարկի պահումը կատարում է եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկման ենթակա բոլոր եկամուտներից՝ հայտարարությունը ներկայացնելու ամսվանից սկսած:

ՊՈԱԿ-ները՝ հարկային գործակալի պարտականությունը կատարելու համար, հստակ պետք է տարանջատեն՝

- ում են վճարվում եկամուտները (անհատ ձեռնարկատերին, Հայաստանի Հանրապետության քաղաքացուն թե օտարերկրացուն (օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ)),
- ինչ եկամուտներ են վճարվում:

Ուշադրություն. Հաճախ «Հայաստանի Հանրապետության քաղաքացի» հասկացությունը նույնացվում է «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ» հասկացության հետ, մինչդեռ ռեզիդենտ կարող են հանդիսանալ նաև օտարերկրացիները, և հակառակը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին կարող է ճանաչվել որպես Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ, եթե առկա չէ օրենքով սահմանված ռեզիդենտության չափանիշներից որևէ մեկը: Հարկային գործակալը եկամտահարկը հաշվարկելիս հիմնվում է ոչ թե անձի ռեզիդենտության (որի որոշման իրավասությունը իրեն տրված չէ), այլ քաղաքացիության չափանիշի վրա:

Անձի ռեզիդենտ լինելու կամ չլինելու (ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում ստացված եկամուտների հարկման) հարցերը կարգավորվում են նաև Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով, և այդ դեպքում նշված պայմանագրերով սահմանված նորմերը գերակայում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության նկատմամբ:

Եթե ՊՈԱԿ-ը եկամուտներ է վճարում անհատ ձեռնարկատերին, որի հետ կնքված է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր (կամ կազմվել է՝ դրան ըստ էության փոխարինող հաշիվ-ապրանքագիրը), որտեղ նշված են անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, պետական գրանցման վկայականի համարը, անձնագրի տվյալները, Հայաստանի Հանրապետությունում բնակության հասցեն, ապա ՊՈԱԿ-ը եկամուտները վճարելիս չի հաշվարկում և պետական բյուջե չի վճարում եկամտահարկը:

Ուշադրություն. Անհատ ձեռնարկատիրոջ հետ օրենքով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիա-իրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանի Հանրապետությունում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում ՊՈԱԿ-ները վճարվող եկամտի գումարից, առանց հաշվի առնելու օրենքով սահմանված նվազեցումները, 15% դրույքաչափով պահում և պետական բյուջե են վճարում եկամտահարկը:

Օտարերկրացիներին եկամուտներ վճարելիս ՊՈԱԿ-ները եկամտի վճարման աղբյուրի մոտ եկամտահարկի պահում չեն իրականացնում, եթե վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության արդյունք են կամ էլ վճարված եկամուտները կապված են օտարերկրացու կողմից իրականացված արտաքին տնտեսական գործունեության հետ (դա՛ օտարերկրացու անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներկրելու հետ կապված գործունեությունն է, որի դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը, որը հիմնավորվում է համապատասխան մաքսային փաստաթղթերով և տվյալ գործառնությունում բացակայում են միջնորդները): Մնացած դեպքերում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց եկամուտներ վճարելիս ՊՈԱԿ-ները եկամտի վճարման աղբյուրի մոտ, առանց օրենքով սահմանված նվազեցումների իրականացման (այսինքն՝ հարկվող եկամուտ = համախառն եկամուտ), եկամտահարկը պահում են հետևյալ դրույքաչափերով՝

5 %՝ եթե դրանք ապահովագրական հատույումներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ են,

10%՝ մնացած բոլոր եկամուտներից (բացի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտներից):

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված դրույքաչափերով (10% կամ 20%՝ կախված վճարվող եկամտի չափից):

Օրինակ. ՊՈԱԿ-ը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացու 2006թ. մարտի 1-ին հաշվարկում է փետրվար ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով, որը հանդիսանում է հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ և եկամտահարկը կազմում է 7,0 հազ. դրամ (70,0×10%):

Ամսվա ընթացքում յուրաքանչյուր հաջորդ վճարման դեպքում կատարվում է աճողական կարգով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների և եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով տվյալ վճարման վայրում այդ ամսվա համար ՊՈԱԿ-ի կողմից օտարերկրյացույն կատարված վճարումների ընդհանուր գումարից:

Օրինակ. ՊՈԱԿ-ը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Ռուսաստանի Դաշնության նույն քաղաքացու 2006թ. մարտի 6-ին հաշվարկում է փետրվար ամսվա պարգևատրում՝ 30,0 հազ. դրամ գումարով և կատարվում է աճողական կարգով հայաստանյան աղբյուրներից վճարված եկամուտների և եկամտահարկի հաշվարկ՝ ելնելով փետրվար ամսվա համար ՊՈԱԿ-ի կողմից այդ օտարերկրյացույն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից (70,0 + 30,0 = 100,0 հազ. դրամ): Եկամտահարկը կազմում է 12,0 հազ. դրամ (8,0 + (100,0 - 80,0) × 20%), որից 5,0 հազ. դրամը (12,0 - 7,0)՝ պարգևատրման գումարից:

Օտարերկրացիներին եկամուտներ վճարելիս ՊՈԱԿ-ները սահմանված ձևով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնում են վճարված եկամուտների վերաբերյալ տեղեկություններ:

Ուշադրություն. Յուրաքանչյուր չներկայացված կամ ուշացումով ներկայացված տեղեկության համար վճարվում է տուգանք՝ 25,0 հազ. դրամի չափով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին եկամուտներ վճարելիս եկամտահարկով հարկման սխեման այլ է՝ հարկվող եկամուտը որոշելու համար քաղաքացույն վճարվող եկամուտներից հարկային գործակալը պետք է կատարի նվազեցումներ նվազեցվող եկամուտների և անձնական նվազեցումների, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների չափով: Այսինքն՝

$$\begin{aligned} & \text{Հարկվող եկամուտ} = \\ & = \text{Համախառն եկամուտ} - \text{Նվազեցումներ} > 0 \end{aligned}$$

Բացառությամբ են կազմում ռոյալթիները, տոկոսները, վարձավճարները և գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտները (բացի գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերումների դիմաց վճարվող եկամուտների) որոնց հարկումը հարկային գործակալի կողմից կատարվում է առանց որևէ նվազեցման:

Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում ֆիզիկական անձի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է (անկախ դրանց ստացման աղբյուրներից): Սակայն, եկամտի որոշ տեսակներ չեն ներառվում համախառն եկամտի մեջ (օրինակ՝ պետական նպաստները (բացառությամբ՝ ժամանակավոր անաշխատունակության և հիվանդ ընտանիքի անդամի խնամքի նպաստների), գոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին տրվող միանվագ վճարները, ալիմենտները, արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց վճարած գումարները):

Նվազեցվող եկամուտների (այսինքն՝ եկամուտներ, որոնք ներառվում են համախառն եկամտի մեջ և, միաժամանակ, նվազեցվում համախառն եկամտից) տեսակները սահմանված են «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-11-րդ հոդվածներով, և հարկային գործակալի կողմից դրանք վճարվելու դեպքում նվազեցումը կատարում է այդ հարկային գործակալը (այսինքն՝ այդ եկամուտներից չի հաշվարկվում եկամտահարկ): ՊՈԱԿ-ների կողմից առավել հաճախ վճարվող նվազեցվող եկամուտներն են՝ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում փոխհատուցման վճարները, կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական և բնամթերային ձևով ցույց տրվող օգնությունը, ԲՈՒՀ-երի սովորողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին վճարվող կրթաթոշակները:

Բացի նվազեցվող եկամուտներից, Հայաստանի Հանրապետության քաղաքացու հարկվող եկամուտը որոշելիս հարկային գործակալը նրա անձնական նվազեցումը (20,0 հազ. դրամ) կատարում է եկամտի վճարման յուրաքանչյուր ամսվա համար՝ այլ հարկային գործակալների կողմից այդ անձին վճարված եկամուտներից անձնական նվազեցումը կատարելու հանգամանքից անկախ:

- *համախառն եկամուտ (70,0+40,0)՝* *110,0 հազ. դրամ,*
- *պարտադիր սոցիալական
ապահովագրության վճար՝* *3,3 հազ. դրամ,*
- *անձնական նվազեցում՝* *20,0 հազ. դրամ,*
- *հարկվող եկամուտ (110,0-3,3-20,0)՝* *86,7 հազ. դրամ,*
- *հարկ (8,0+(86,7-80,0)×20%)՝* *9,34 հազ. դրամ:*

Հաշվանցելով աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի գումարը, որոշվում է պարզևատրման գումարից պահման ենթակա եկամտահարկի գումարը՝ 4,55 հազ. դրամ (9,34-4,79):

Հարկային գործակալները՝

- պահված (գանձված) եկամտահարկի գումարը ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ վճարում են պետական բյուջե,
- եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմիններ կայացնում են սահմանված ձևով հաշվարկ՝ անցած եռամսյակում յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Ընդ որում՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող են հարկային մարմիններ կայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Սակայն, հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո՝ հարկային գործակալների կողմից հարկային մարմիններ ներկայացվող ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկների ճշտում չի իրականացվում,
- եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմիններ կայացնում են սահմանված դեպքերում և ձևով տեղեկություններ՝ անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված

եկամտահարկի գումարների մասին:

Ուշադրություն. *Օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվության նորմերը կիրառվում են նաև իրենց հայեցողությամբ («կամավոր») հարկային գործակալ հանդես եկող ծրագիր իրականացնող կազմակերպությունների նկատմամբ:*

Ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) եկամտահարկի գումարները ֆիզիկական անձանցից կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին 3 ամսվա համար, իսկ եկամտահարկի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող 3 օրացույցային տարվա համար: Սահմանված չափից ավելի գանձված գումարները վերադարձնելու մասին ֆիզիկական անձի գրավոր դիմում տալը կասեցնում է նշված ժամկետի (այսինքն՝ 3 օրացույցային տարվա) ընթացքը:

Ավելացված արժեքի հարկի գծով՝

Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ՝ կոնտրագենտ) հանդիսացող ՊՈԱԿ-ները այդ գործարքների գծով օտարերկրյա անձանց փոխարեն կրում են ԱԱՀ-ի պարտավորություն: Ի տարբերություն ոչ ռեզիդենտի շահութահարկի, ԱԱՀ-ի հաշվարկը կատարվում է հաշվեգրման եղանակով:

6. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՂԱՇՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները սերտորեն կապված են աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրության հետ: Այսպես՝

Աշխատանքային հարաբերությունները, աշխատանքային պայմանագիրը՝

Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա: Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք կամ մատուցել որոշակի ծառայություններ՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել նախատեսված (օրենսդրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ) աշխատանքային պայմաններ: Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով և պետք է ներառի որոշակի պայմաններ: Աշխատողը պարտավոր է պայմանագիրը կնքելու հաջորդ օրն անցնել աշխատանքի, եթե աշխատանքային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ուշադրություն. *Կառավարության 16.06.2006թ. N 875-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Կառավարության 13.12.2002թ. «Վարձու աշխատողների աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման հրամանագիրքը վարելու և պահպանելու կարգը հաստատելու մասին» N*

2034-Ն որոշումը և հաստատվել է «Աշխատանքային պայմանագրի գրանցման, գրանցամատյանի վարման և պահպանման» կարգը, համաձայն որի՝

- աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման պայմանագրերը և պայմանագրի լուծումը գրանցվում է գրանցամատյանում, որի էջերը համարակալվում և կնքվում են գործատուի կնիքով (յուրաքանչյուր վարձու աշխատողի մասին տեղեկությունները գրանցամատյանում գրանցվում են առանձին էջում),
- վարձու աշխատողի և գործատուի միջև կնքված աշխատանքային պայմանագրերը կնքելույ հետո նույն օրը թվագրվում և գրանցվում են գրանցամատյանում (ժամանակագրական հերթականությամբ), որի փաստը հավաստվում է պայմանագրի օրինակների վրա գործատուի կողմից դրված համապատասխան մակագրությամբ,
- մինչև որոշման ուժի մեջ մտնելը գործող աշխատանքային պայմանագրերը գրանցվում են գրանցամատյանում որոշումն ուժի մեջ մտնելույ 3 ամսվա ընթացքում:

Աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերի բացի, արգելվում է պահանջել այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով, սակայն աշխատողը կարող է իր նախաձեռնությամբ գործատուին ներկայացնել իրեն բնութագրող և այլ փաստաթղթեր: Պահանջվող փաստաթղթերի աշխատանքային գրքույկը (բացառությամբ՝ առաջին անգամ կամ համատեղությամբ աշխատանքի ընդունվողների) աշխատողի աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ ներառող հիմնական փաստաթուղթն է: Գործատուն պարտավոր է հիմնական աշխատավայրում աշխատող բոլոր վարձու աշխատողների համար սահմանված կարգով վարել աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկ կամ դրա կրկնօրինակ պատվիրում և աշխատողին տրամադրում է գործատուն՝ իր միջոցների հաշվին):

Ուշադրություն. Կառավարության 16.06.2006թ. N 876-Ն որոշմամբ սահմանվել են աշխատանքային գրքույկի ձևը և աշխատանքային գրքույկ վարելու ու կրկնօրինակ տրամադրելու կարգը: Մինչև որոշման ուժի մեջ մտնելը գործատուի կողմից լրացված և տրված աշխատ-

տանքային գրքույկները պահպանում են իրենց իրավաբանական ուժը և փոխանակման ենթակա չեն, իսկ նախկինում հրատարակված և դեռևս չօգտագործված աշխատանքային գրքույկները ենթակա են օգտագործման մինչև 01.07.2007թ.:

Պետական կազմակերպության ղեկավար մարմնի գործառույթներն իրականացնող անձին նշանակում և ազատում է լիազորված պետական մարմինը (եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ), որի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, նրա աշխատանքի վարձատրման պայմանները և այլն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել աշխատանքային օրենսդրության պահանջներին: Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Գործադիր պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ (մասնավորապես՝ եթե պետական կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության վճարները իր մեղքով սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել):

Աշխատանքային պայմանագրի կնքման ժամանակ գործատուի կամ աշխատողի ցանկությամբ կարող է սահմանվել փորձաշրջան, որը չի կարող 3 ամսից ավել լինել (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում այն կարող է սահմանվել մինչև 6 ամիս ժամկետով):

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ և որոշակի ժամկետով: Որոշակի ժամկետով պայմանագիրը կարող է կնքվել 5 տարուց ոչ ավելի ժամկետով: Աշխատանքային պայմանագիրը որոշակի ժամկետով կարող է կնքվել նաև, եթե՝ աշխատողը գործատուին մատուցում է անձնական բնույթի ծառայություններ, աշխատանքը կատարում են տնաշխատները, կատարվում է համատեղությամբ աշխատանք, կատարվում են սեզոնային աշխատանքներ, կատարվում է ժամանակավոր (մինչև 2 ամիս ժամկետով) աշխատանք:

Այն աշխատանքը, որը կատարվում է առանց աշխատանքային պայմանագիր կնքելու կամ աշխատանքային օրենսդրության կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա, համարվում է անօրինական աշխատանք:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է, մասնավորապես, հետևյալ հիմքերով՝ կողմերի համաձայնությամբ, պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում, աշխատողի նախաձեռնությամբ, գործատուի նախաձեռնությամբ:

Աշխատաժամանակը՝

Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից: Ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը, որպես կանոն, չի կարող անցնել 8 աշխատանքային ժամից: Աշխատաժամանակի առավելագույն տևողությունը (ներառյալ՝ նախատեսված դեպքերում գործատուի պահանջով արտաժամյա աշխատաժամանակը) շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ օրական՝ 12 ժամից:

Հանգստի ժամանակը՝

Հանգստի ժամանակի տեսակներն են՝ հանգստանալու և սնվելու համար ընդմիջումը, աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում հանգստանալու համար լրացուցիչ և հատուկ ընդմիջումները, աշխատանքային օրերի (հերթափոխերի) միջև ընկած անընդմեջ հանգիստը, ամենշաբաթյա անընդմեջ հանգիստը, ամենամյա հանգիստը (ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրեր, արձակուրդ):

Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը 28 օր է: Աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում աշխատողին կարող է տրվել մաս ամենամյա լրացուցիչ արձակուրդ կամ ամենամյա երկարապլած արձակուրդ, ընդ որում՝ ոչ աշխատանքային (տոնական, հիշատակի) օրերը արձակուրդի օրերի թվում չեն ընդգրկվում:

Աշխատավարձը՝

Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց ցանկացած եղանակով տրված լրացուցիչ վարձատրությունը: Աշխատավարձի ամսական և ժամավճարի նվազագույն չափը սահմանվում է օրենքով: Կոլեկտիվ պայմանագրով կարող է սահմանվել ավելի բարձր նվազագույն աշխատավարձի չափ: Ժամավճարային և ամսական

դրույքաչափը, աշխատանքի վարձատրության այլ ձևեր, չափն ու պայմանները, աշխատանքի նորմաները սահմանվում են կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով:

Աշխատողներին երաշխավորվում է միջին աշխատավարձ: Աշխատանքային օրենսգրքով նախատեսված միջին աշխատավարձի չափը որոշելու բոլոր դեպքերի համար սահմանվում է հաշվարկման միասնական կարգ: Միջին աշխատավարձի հաշվարկման համար հաշվի են առնվում աշխատանքի վարձատրության բոլոր տեսակները, որոնք կիրառվում են տվյալ կազմակերպությունում (անկախ վճարման աղբյուրից):

Աշխատողի միջին ամսական աշխատավարձի չափը որոշվում է այդպիսի պահանջ առաջանալու ամսվան նախորդող վերջին 12 լրիվ ամիսների ընթացքում տվյալ գործատուի կողմից աշխատողին վճարված ամենամսյա աշխատավարձի ընդհանուր գումարը 12-ի բաժանելու միջոցով: Եթե որևէ պատճառով 12 ամիսները լրիվ չեն ձևավորվում, ապա միջին աշխատավարձի չափը հաշվարկվում է հնարավոր մյուս բոլոր միսյանց նախորդող լրիվ ամիսների և դրանց համար վճարված աշխատավարձի ընդհանուր գումարը լրիվ ամիսների թվի վրա բաժանելու միջոցով:

Միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձը բաժանելով 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի թիվը):

Եթե հաշվարկման լրիվ ամիսները չեն ձևավորվում տարբեր հարգելի պատճառներով աշխատանքից բացակայելու պատճառով, ապա այդ ոչ լրիվ ամիսների փոխարեն հաշվարկման համար հիմք է ընդունվում վերջին մեկ լրիվ ամսվա աշխատավարձի դրույքաչափը, իսկ եթե աշխատանքի վերադառնալուց հետո մեկ լրիվ ամիս չաշխատած անհրաժեշտություն է առաջանում հաշվարկել միջին ամսական աշխատավարձը, ապա այն որոշվում է փաստացի կատարած աշխատանքի համար հաշվարկված աշխատավարձը՝

- ա) աշխատանքի մեջ գտնվելու օրացույցային օրերի վրա բաժանելու և 30.4-ի բազմապատկելու միջոցով, եթե նշված ժամանակահատվածը մեկ շաբաթից ավելի է.
- բ) փաստացի աշխատած օրերի վրա բաժանելու և 21-ի բազմապատկելու միջոցով, եթե փաստացի աշխատած օրերը 5-ից ավելի չեն՝ 5-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում.
- գ) փաստացի աշխատած օրերի վրա բաժանելու և 21-ի բազմապատկելու միջոցով, եթե փաստացի աշխատած օրերը 6-ից ավելի չեն՝ 6-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում:

Աշխատանքային ստաժը՝

Աշխատողի աշխատանքային ստաժը կարող է լինել՝ ընդհանուր, հատուկ, որոշակի կազմակերպությունում կամ միևնույն գործատուի մոտ աշխատանքի, անընդհատ և ավահովագրական: Վերջինում հաշվարկվում է չարգելված աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածների հանրագումարը, որի ընթացքում քաղաքացին ենթակա է եղել ավահովագրության, նրա համար կամ նրա կողմից սահմանված կարգով կատարվել են պարտադիր սոցիալական ավահովագրության վճարումներ: Աշխատանքային ստաժի հաշվարկման կարգը սահմանում է Կառավարությունը:

Գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացնում է աշխատանքի պետական տեսչությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ պետական մարմիններ:

Պարտադիր սոցիալական ավահովագրության վճարները՝

Պարտադիր սոցիալական ավահովագրության վճարների (սոցիալական վճարների) հասկացությունը, հավաքագրման, իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմունքները, դրույթաչափերը և վճարման կարգը սահմանված են «Պարտադիր սոցիալական ավահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Եթե ՊՈԱԿ-ները հանդիսանում են գործատու (այսինքն՝ իրավունք ունեն ոչ միայն օրենքով չարգելված աշխատանքներ առաջարկելու ֆիզիկական անձանց, այդ նպատակով պայմանագրեր /աշխատանքային, քաղաքացիաիրավական/ կնքելու միջոցով նրանց ներգրավելու որոշակի աշխատանքների կատարման /ծառայությունների մատուցման/ մեջ, այլև փաստացի օգտագործում են ֆիզիկական անձանց աշխատանքը /ծառայությունները/, ապա պարտավոր են կատարել սոցիալական վճարներ՝ առանց հաշվի առնելու այլ գործատու(ներ)ի կողմից աշխատողի համար կատարված սոցիալական վճարները:

ՊՈԱԿ-ները գործատուի պարտականությունը կատարելու համար պետք է տարանջատեն՝

- աշխատանքների (ծառայությունների) դիմաց ում են վճարում (Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին թե օտարերկրացիներին),

- պայմանագրի ինչպիսի տեսակի հիման վրա են այն վճարում (քաղաքացիա-իրավական, աշխատանքային):

Եթե ՊՈԱԿ-ը աշխատանքների (ծառայությունների) դիմաց վճարում է օտարերկրացիներին, ապա ազատվում է սոցիալական վճարումների կատարման պարտականությունից:

Եթե ՊՈԱԿ-ը աշխատանքների (ծառայությունների) դիմաց վճարում է ՀՀ քաղաքացիներին, ապա պարտավոր է կատարել սոցիալական վճարումներ: Ընդ որում՝ այդ աշխատանքների (ծառայությունների) դիմաց վճարվող աշխատանքի վարձատրությունն և դրան հավասարեցված եկամուտները կարող են վճարվել ինչպես դրամական, այնպես էլ բնաիրային (ոչ դրամական) ձևով: Բնաիրային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտների հաշվարկման կարգը համապատասխանեցվել է Կառավարության 02.07.2001թ. N 284 որոշմամբ հաստատված «Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները ֆիզիկական անձանց համախառն եկամտում հաշվի առնելու» կարգին (տես՝ եկամտահարկի գծով հարկային գործակալի մասը):

Աշխատանքային պայմանագրերի շրջանակներում սոցիալական վճարների կատարումը՝

Գործատուները աշխատանքային պայմանագրերի շրջանակներում իրենց մոտ վարձու աշխատողներին վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրան հավասարեցված եկամուտներից յուրաքանչյուր ամիս սոցիալական վճարները հաշվարկում են տվյալ ամսվա համար հաշվարկված (հաշվարկման ենթակա) եկամուտներից՝ անկախ վճարման պահից:

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտներ են համարվում աշխատանքային օրենսդրությանը համապատասխան որոշակի ժամկետով (անձնական բնույթի ծառայություններ մատուցելու մասին, տնաշխատների հետ, համատեղությամբ, ժամանակավոր (մինչև 2 ամիս ժամկետով), սեզոնային) և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վճարումները (վարձատրությունը)՝

- ա) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն), ներառյալ՝
 - արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,
 - գիշերային աշխատանքի վարձատրությունը,

- ոչ աշխատանքային (հանգստյան, տոնական, հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,
 - լրավճարները, հավելավճարները (այդ թվում՝ դասային և հատուկ կոչումների, գիտական աստիճանների համար) և պարզևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),
 - աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերում տրվող փոխհատույցման և օգնության գումարների),
 - պարապուրդի ժամանակ վճարումը,
 - օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,
 - լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,
 - առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով),
 - աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ այլ վայրում աշխատանքի ընդունվելու դեպքում տեղափոխման համար նախապատրաստվելու և նոր վայրում տեղավորվելու ժամանակահատվածի համար վարձատրությունը.
- բ) ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) տրամադրվող վճարովի արձակուրդի համար, ինչպես նաև աշխատողին աշխատանքից ազատելու ժամանակ ամենամյա արձակուրդի տրամադրման դեպքում վճարվող աշխատավարձը.
- գ) նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձը.
- դ) հեղինակային վարձատրությունը (բացառությամբ ռոյալթի-ների).

Սոցիալական վճարների դրույթաչափերը՝

Գործատուները յուրաքանչյուր (վարձու) աշխատողի համար սոցիալական վճարները կատարում են հետևյալ չափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 20,0 հազ. դրամ	7,0 հազ. դրամ
20,0 հազ. դրամից մինչև 100,0 հազ. դրամ	7,0 հազ. դրամ գումարած 20,0 հազ. դրամը գերազանցող գումարի 15%-ը
100,0 հազ. դրամից ավելի	19,0 հազ. դրամ գումարած 100,0 հազ. դրամը գերազանցող գումարի 5%-ը

Գործատուները աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտներից կատարում են նաև 3%-ի չափով սոցիալական վճարներ:

Օրինակ. ՊՈԱԿ-ը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացուն 2006թ. հոկտեմբերի 5-ին հաշվարկում և վճարում է սեպտեմբեր ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով: 2006թ. հոկտեմբերի 9-ին սպահովադրի կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում և վճարվում է սեպտեմբեր ամսվա պարգևատրում՝ 40,0 հազ. դրամ գումարով, իսկ 2006թ. նոյեմբերի 6-ին հաշվարկվում և վճարվում է հոկտեմբեր ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով:

Սեպտեմբեր ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով սեպտեմբեր ամսվա համար սպահովադրի կողմից այդ քաղաքացուն հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների (ԱՎՈՒՄ) ընդհանուր գումարից՝

- $ԱՎՈՒՄ (70,0 + 40,0)$ 110,0 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար $(19,0 + (110,0 - 100,0) \times 5\%)$ 19,5 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար $(110,0 \times 3\%)$ 3,3 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար $(19,5 + 3,3)$ 22,8 հազ. դրամ:

Սեպտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (110,0 հազ. դրամ) և սոցիալական վճարները (22,8 հազ. դրամ) արտացոլվում են սեպտեմբեր ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները կազմակերպության կողմից ենթակա են վճարման մինչև 20.10.2006թ. (ներառյալ): Միաժամանակ՝ հոկտեմբեր ամսին վճարված եկամուտները $(70,0 + 40,0 = 110,0$ հազ. դրամ) և հաշվարկված եկամտահարկը $(8,0 + (110,0 - (20,0 + 3,3) - 80,0) \times 20\% = 9,3$ հազ. դրամ) արտացոլվում են 4-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում (հոկտեմբեր ամսվան վերաբերող սյունակներում), իսկ եկամտահարկը կազմակերպության կողմից ենթակա է վճարման մինչև 05.11.2006թ. (ներառյալ):

Հոկտեմբեր ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

- ԱՎՈՒՄ՝ 70,0 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար $(7,0 + (70,0 - 20,0) \times 15\%)$ ՝ 14,5 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար $(70,0 \times 3\%)$ ՝ 2,1 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար $(14,5 + 2,1)$ ՝ 16,6 հազ. դրամ:

Հոկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (70,0 հազ. դրամ) և սոցիալական վճարները (16,6 հազ. դրամ) արտացոլվում են հոկտեմբեր ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները կազմակերպության կողմից ենթակա են վճարման մինչև 20.11.2006թ. (ներառյալ): Միաժամանակ՝ նոյեմբեր ամսին վճարված եկամուտները (70,0 հազ. դրամ) և հաշվարկված եկամտահարկը $((70,0 - (20,0 + 2,1)) \times 10\% = 4,8$ հազ. դրամ) արտացոլվում են 4-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում (նոյեմբեր ամսվան վերաբերող սյունակներում), իսկ եկամտահարկը կազմակերպության կողմից ենթակա է վճարման մինչև 05.12.2006թ. (ներառյալ):

Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից, որոնք չեն վերաբերվում կոնկրետ ամսին, սոցիալական վճարները հաշվարկվում են այն ամսվա համար, երբ կատարվել է այդ եկամուտների հաշվարկումը:

Օրինակ. Կազմակերպությունը աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացու 2006թ. հոկտեմբերի 5-ին հաշվարկում և վճարում է սեպտեմբեր ամս-

վա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով: 2006թ. հոկտեմբերի 9-ին ապահովագրի կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում և վճարվում է 3-րդ եռամսյակի պարզևատրում՝ 40,0 հազ. դրամ գումարով, իսկ 2006թ. նոյեմբերի 6-ին հաշվարկվում և վճարվում է հոկտեմբեր ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով:

Մեկտեմբեր ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

- ԱՎՈՒՄ՝ 70,0 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար $(7,0 + (70,0 - 20,0) \times 15\%)$ ՝ 14,5 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար $(70,0 \times 2\%)$ ՝ 2,1 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար $(14,5 + 2,1)$ ՝ 16,6 հազ. դրամ:

Մեկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (70,0 հազ. դրամ) և սոցիալական վճարները (16,6 հազ. դրամ) արտացոլվում են սեպտեմբեր ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները կազմակերպության կողմից ենթակա են վճարման մինչև 20.10.2006 թ. (ներառյալ): Միաժամանակ հոկտեմբեր ամսին վճարված եկամուտները $(70,0 + 40,0 = 110,0$ հազ. դրամ) և հաշվարկված եկամտահարկը $((70,0 - (20,0 + 2,1)) \times 10\% = 4,8$ հազ. դրամի և $(40,0 - (20,0 + 1,2)) \times 10\% = 1,9$ հազ. դրամի հանրագումար, ընդամենը՝ $4,8 + 1,9 = 6,7$ հազ. դրամ) արտացոլվում են 4-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում (հոկտեմբեր ամսվան վերաբերող սյունակներում), իսկ եկամտահարկը կազմակերպության կողմից ենթակա է վճարման մինչև 05.11.2006 թ. (ներառյալ):

Հոկտեմբեր ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով հոկտեմբեր ամսվա համար ապահովագրի կողմից այդ քաղաքացուն հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների (ԱՎՈՒՄ) ընդհանուր գումարից՝

- ԱՎՈՒՄ $(40,0 + 70,0)$ ՝ 110,0 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար $(19,0 + (110,0 - 100,0) \times 5\%)$ ՝ 19,5 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար $(110,0 \times 3\%)$ ՝ 3,3 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար $(19,5 + 3,3)$ ՝ 22,8 հազ. դրամ:

Հոկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (110,0 հազ. դրամ) և սոցիալական վճարները (22,8 հազ. դրամ) արտացոլվում են հոկտեմբեր ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները կազմակերպության կողմից ենթակա են վճարման մինչև 20.11.2006 թ. (ներառյալ): Միաժամանակ՝ նոյեմբեր ամսին վճարված եկամուտները (70,0 հազ. դրամ) և հաշվարկված եկամտահարկը $(8,0 + (110,0 - (20,0 + 3,3) - 80,0) \times 20\% = 9,3$ հազ. դրամի և $(40,0 - (20,0 + 1,2)) \times 10\% = 1,9$ հազ. դրամի տարբերություն, ընդամենը՝ $9,3 - 1,9 = 7,4$ հազ. դրամ) արտացոլվում են 4-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում (նոյեմբեր ամսվան վերաբերող սյունակներում), իսկ եկամտահարկը կազմակերպության կողմից ենթակա է վճարման մինչև 05.12.2006 թ. (ներառյալ):

Գործատուները յուրաքանչյուր ամսվա սոցիալական վճարների հաշվին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով վարձու աշխատողներին հաշվարկում ու վճարում են ապահովագրական նպաստներ, որից հետո սոցիալական վճարների մնացորդ գումարները փոխանցում են ապահովագրության բյուջե: Ընդ որում՝ գործատուները յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարների գումարների փաստացի վճարված ապահովագրական նպաստների գումարների չափով պակասեցումը կատարում են սոցիալական վճարների համար սահմանված վճարման ժամկետի վերջին օրվա (այսինքն՝ այդ նպաստների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ի) հաշվով:

Օրինակ. ՊՈԱԿ-ը վարձու աշխատողին (Հայաստանի Հանրապետության քաղաքացու) ներկայացված փաստաթղթերի հիման վրա 2006 թ. սեպտեմբերի 5-ին վճարվում է օգոստոս ամսվա համար հիվանդության նպաստ 10,0 հազ. դրամ: 2006 թ. սեպտեմբեր ամսվա աշխատավարձը կազմում է 70,0 հազ. դրամ: 2006 թ. հուլիս-օգոստոս ամիսների համար հաշվարկված սոցիալական վճարները կազմում են 29,2 հազ. դրամ $(2 \times 14,6)$, որոնք վճարվել են 2006 թ. հոկտեմբերի 25-ին՝ սեպտեմբեր ամսվա համար վճարման ենթակա սոցիալական վճարների հետ միասին:

Տվյալ դեպքում սեպտեմբեր ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով տվյալ ամսվա աշխատավարձից (ԱՎՈՒՄ):

Սեպտեմբեր ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

- ԱՎՈՒՄ՝ 70,0 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար
($7,0 + (70,0 - 20,0) \times 3\%$)՝ 14,5 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար
սոցիալական վճար ($70,0 \times 3\%$)՝ 2,1 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար ($14,5 + 2,1$)՝ 16,6 հազ. դրամ,
- հիվանդության նպաստ՝ 10,0 հազ. դրամ,
- վճարման ենթակա սոցիալական
վճար ($16,6 - 10,0$)՝ 6,6 հազ. դրամ:

Սեպտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (70,0 հազ. դրամ), սոցիալական վճարները (16,6 հազ. դրամ) և հիվանդության նպաստը (10,0 հազ. դրամ) արտապոլվում են սեպտեմբեր ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ ՊՈԱԿ-ի կողմից մինչև 20.10.2006 թ. (ներառյալ) ենթակա է վճարման 6,6 հազ. դրամ սեպտեմբեր ամսվա սոցիալական վճարների գումարը: Ընդ որում՝ 2006 թ. սեպտեմբերի 5-ին վճարված հիվանդության նպաստի չափով սոցիալական վճարի ապառքի գումարի պակասեցումը կատարվում է 2006 թ. հոկտեմբերի 20-ին և հուլիս-սեպտեմբեր ամիսների համար վճարման ենթակա սոցիալական վճարները ուշացնելու համար տույժերը հաշվարկվում են ընդհանուր կարգով:

Ապահովագրական նպաստների ստացման իրավունք ունեն գործատուների մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք, որոնք ենթակա են պարտադիր սոցիալական ապահովագրության և որոնց համար օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալական վճարներ են կատարվում ապահովագրության բյուջե: Ապահովագրական նպաստները տրվում են, եթե դրանց ստանալու իրավունքն առաջացել է աշխատանքի ժամանակաշրջանում (ներառյալ՝ փորձաշրջանը): Հայաստանում աշխատող օտարերկրացիները ապահովագրական նպաստների իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար՝ իրենց կողմից Հիմնադրամ կամավոր սոցիալական վճարներ կատարելու պարտավորություն ստանձնելու մասին դիմումի առկայության և սահմանված կարգով սոցիալական վճարներ կատարելու դեպքում: Ապահովագրական նպաստները նշանակվում են, եթե դրանց համար պահանջվող փաս-

տաթղթերը ներկայացվել են աշխատունակության վերականգնման, հղիության ու ծննդաբերության արձակուրդի (ժամանակաշրջանի) ավարտման կամ հաշմանդամության խումբ սահմանելու օրվանից 6 ամսվա ժամկետում: Ապահովագրական նպաստները չեն վերաբերում արտադրությունում դժբախտ դեպքերի կամ մասնագիտական հիվանդությունների հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստներին, որոնք վճարվում են գործատուի միջոցներից:

Վարձու աշխատողին հիվանդության նպաստը տրվում է հիվանդության (վնասվածքի) ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը: Վարձու աշխատողին պրոթեզավորման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը: Առողջարանային բուժման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան լիաբուժման ուղարկված վարձու աշխատողին, ինչպես նաև տուբերկուլյոզային առողջարան մեկնած վարձու աշխատողին՝ առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք են հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը և առողջարանային բուժման ուղեգրի պատճենը: Վարձու աշխատողին հղիության ու ծննդաբերության նպաստը տրվում է հղիության և ծննդաբերության՝ օրենքով սահմանված կարգով հատկացված (գործատուի կողմից ձևակերպված) արձակուրդի ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը: Վարձու աշխատողին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը տրվում է օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, իսկ մինչև 18 տարեկան անհատական խնամքի կարիք ունեցող երեխային կամ հաշմանդամ երեխային առողջարանում խնամելու դեպքում՝ նաև առողջարանային բուժման ուղեգրի պատճենը: Համատեղությամբ աշխատելու դեպքում վարձու աշխատողին ապա-

հովագրական նպաստ նշանակելու համար հիմնական աշխատավայրի գործատուի համար հինք է հանդիսանում ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, իսկ մյուս գործատու(ներ)ի համար՝ հիմնական աշխատավայրի գործատուի հաշվապահության կողմից կնքված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի պատճենը:

Ամենամյա արձակուրդի ընթացքում ժամանակավոր անաշխատունակություն առաջանալիս վարձու աշխատողին ապահովագրական նպաստը (բացառությամբ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի) տրվում է ժամանակավոր անաշխատունակության բոլոր օրերի համար: Չվճարվող արձակուրդում կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանում անաշխատունակության դեպքում ապահովագրական նպաստ չի տրվում (բացառությամբ՝ հղիության ու ծննդաբերության նպաստի): Եթե անաշխատունակությունը շարունակվում է նաև արձակուրդի ավարտից հետո, ապա ապահովագրական նպաստը տրվում է այն օրվանից, երբ աշխատողը պետք է անցներ աշխատանքի: Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողին ժամանակավոր անաշխատունակության դեպքերում ապահովագրական նպաստ տրվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (բայց ոչ ավելի, քան մինչև աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը), եթե նա վերջին մեկ տարվա ընթացքում մինչև ժամանակավոր անաշխատունակության ծագումը աշխատել է 3 ամսից ոչ պակաս կամ վերջին 2 տարվա ընթացքում՝ 10 ամսից ոչ պակաս:

Ապահովագրական նպաստները հաշվարկվում են վարձու աշխատողի միջին աշխատավարձից (եկամտից): Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը (եկամտուրը) հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացույցային ամիսներին տվյալ աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից, որոնցից սահմանված կարգով կատարվել են սույնալիկան վճարներ: Եթե ապահովագրական դեպքին նախորդող եռամսյա ժամանակաշրջանում վարձու աշխատողը եկամտ չի ունեցել (աշխատավարձ չի ստացել), ապա որպես միջին ամսական աշխատավարձ (եկամտ) հինք է ընդունվում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 13-ապատիկը (13,0 հազ. դրամ): Եթե ապահովագրական դեպքին նախորդող՝ տվյալ գործատուի մոտ աշխատանքի ժամանակաշրջանը պակաս է 3 օրացույցային ամիսներից, ապա միջին ամ-

սական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է փաստացի աշխատած ամիսների (օրերի) համար հաշվարկված եկամտիչ:

Հիվանդության, պրոթեզավորման, առողջարանային բուժման և ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստները հաշվարկելիս հիմք ընդունվող միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով, եթե այն չի գերազանցում 100,0 հազ. դրամը, իսկ 100,0 հազ. դրամը գերազանցելու դեպքում՝ 100,0 հազ. դրամին գումարած 100,0 հազ. դրամը գերազանցող գումարի 30%-ը (այս ձևով հաշվարկված միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով այն աշխատողների համար, ովքեր ունեն 8 և ավելի տարվա ապահովագրական /աշխատանքային/ ստաժ, կամ՝ ովքեր իրենց խնամքի տակ ունեն 18 տարին չլրացած հաշմանդամ երեխա կամ 3 և ավելի երեխա, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-ից 23 տարեկան անձինք են, Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մարտական գործողությունների մասնակիցներ են կամ Չերնոբիլի ԱԷԿ-ի վթարը վերացնելու ընթացքում հաշմանդամ են դարձել /անկախ ապահովագրական ստաժից/, իսկ 80%-ի չափով այն աշխատողների համար, ովքեր ունեն մինչև 8 տարվա ապահովագրական /աշխատանքային/ ստաժ): Հղիության ու ծննդաբերության նպաստը հաշվարկելիս հիմք ընդունվող միջին աշխատավարձը վերցվում է 100%-ի չափով՝ անկախ ապահովագրական ստաժի տևողությունից և աշխատավարձի չափից (առանց կիրառելու աշխատավարձի չափի հետ կապված սահմանափակումները): Ապահովագրական նպաստները հաշվարկելու համար միջին աշխատավարձը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) վրա և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացույցային օրերի թվով:

Վարձու աշխատողների ապահովագրական նպաստի հաշվարկումը, նշանակումը և վճարումը իրականացնում է գործատուն: Ապահովագրական նպաստը վճարվում է դրա նշանակումից հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված բոլոր վարձու աշխատողների սույնիսկան վճարների ընդհանուր գումարը բավարար չէ, ապա գործատուն ապահովագրական նպաստը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է Հիմնադրամը գործատուի կողմից սույնիսկան վճարների վերաբերյալ ամսական հաշվետվության հետ մեկտեղ հարկային մարմին ներկայացված համապատասխան տեղեկանքի հիման վրա՝ հարկային մարմնի հաստատած տեղեկանքը Հիմնադրամ

ներկայացնելուց հետո 1-ամսյա ժամկետում: Եթե գործատուն ազատված է սոցիալական վճարներ կատարելու պարտավորությունից, ապա ապահովագրական նպաստները վճարվում են գործատուի միջոցների հաշվին: Գործատուի վերակազմակերպման դեպքում վարձու աշխատողներին ապահովագրական նպաստ նշանակում և վճարում է նրա իրավահաջորդը, իսկ լուծարման դեպքում՝ Հիմնադրամը:

Մխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված ապահովագրական նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման, ընդ որում՝ վարձու աշխատողներին պակաս վճարված ապահովագրական նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից:

Ավել վճարված ապահովագրական նպաստի գումարի հետպահումները կատարվում են գործատուի կամ Հիմնադրամի որոշմամբ, եթե ապահովագրական նպաստը նշանակվել և վճարվել է թվաբանական սխալի կամ ապահովագրական նպաստը ստացողի կողմից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով: Ավել վճարված գումարը հետ է պահվում ամբողջությամբ: Հետպահումը կատարվում է ապահովագրական նպաստի հաջորդ վճարումներից կամ աշխատավարձից, ընդ որում՝ հետպահվող գումարի չափը յուրաքանչյուր անգամ չի կարող գերազանցել վճարվող ապահովագրական նպաստի կամ աշխատավարձի 20%-ը: Եթե ապահովագրական նպաստը նշանակվել և վճարվել է թվաբանական սխալով, ապա ավել վճարված ապահովագրական նպաստի գումարի հետպահումները կարող են կատարվել, եթե ապահովագրական նպաստի նշանակման օրվանից չի անցել 3 ամսից ավել: Եթե ապահովագրական նպաստը նշանակվել և վճարվել է սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով, ապա ավել վճարված ապահովագրական նպաստի գումարի հետպահումները կատարվում են առանց ժամկետի սահմանափակման:

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում օրենքով սահմանված դեպքերում (մասնավորապես՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում) գործատուն վարձու աշխատողին վճարում է արձակման նպաստ (առնվազն մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով, իսկ առանձին դեպքերում՝ 2 շաբաթվա աշխատավարձի չափով, որը հաշվարկվում է վար-

ձու աշխատողի միջին օրական աշխատավարձի չափից ելնելով): Վարձու աշխատողին վճարվող արձակման նպաստից սույնալական վճարներ չեն հաշվարկվում:

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է վարձու աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ (աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե օրենքով կամ աշխատանքային պայմանագրով այլ կարգ նախատեսված չէ)՝ վերջնահաշվարկի օրը վճարելով աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները: Վարձու աշխատողի ցանկությանը գործատուն տրամադրում է տեղեկանք աշխատանքային գործառույթների (պարտականությունների), աշխատավարձի, վճարված հարկերի ու սույնալական վճարների չափի և աշխատանքի գնահատականի վերաբերյալ: Վարձու աշխատողին վճարվող վերջնահաշվարկի գումարը կազմող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից սույնալական վճարները հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով:

Օրենքով սահմանված դեպքերում (մասնավորապես՝ կազմակերպության վերակազմակերպում կամ լուծարում, գործատուի մոտ աշխատողների թվի կամ հաստիքների կրճատում) ազատվող յուրաքանչյուր վարձու աշխատողի համար զբաղվածության հիմնադրամ փոխանցվող գործարներից սույնալական վճարներ չեն հաշվարկվում:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում սույնալական վճարների կատարումը

Քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարվող աշխատանքներից և մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտներն են, մասնավորապես՝

- կապալի (այդ թվում՝ շինարարական, նախագծային և հետազոտական աշխատանքների կապալի) պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- մանկավարժական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- հանձնարարության և գործակալության պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը,

- փոխադրման և տրանսպորտային առաքման պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա գիտական և ստեղծագործական աշխատանքների դիմաց եկամուտները չեն դիտվում որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված կամ դրանց հավասարեցված եկամուտներ:

Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների համար գործատուները աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտներից 3%-ի չափով սույնիսկական վճարներ չեն կատարում:

Եթե աշխատանքները կատարվում են կամ ծառայությունները մատուցվում են քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրում նշված կոնկրետ ժամկետում, ապա՝

- ա) այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով չեն նախատեսվում աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սույնիսկական վճարներ չեն հաշվարկվում և չեն կատարվում.
- բ) այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով նախատեսվում է աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սույնիսկական վճարները հաշվարկվում են այդ ամիսների համար պայմանագրով առանձնացված վարձատրությունից ելնելով (բայց ոչ պակաս, քան 7,0 հազ. դրամ) և վճարվում են այդ ամիսների հաշվարկված սույնիսկական վճարների համար սահմանված ժամկետներում.
- գ) այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով նախատեսվում է աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սակայն այդ ամիսների համար պայմանագրով առանձնացված վարձատրություն նախատեսված չէ, սույնիսկական վճարները հաշվարկվում են պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների (կամ դրանց փուլերի) ընդհանուր արժեքի և այդ արժեքի մեջ ընդգրկված ու պայմանագրով առանձնացված վարձատրությամբ ամիսների վարձատրության տարբերությունը ըստ ամիսների հավասարաչափ բաշխվող գումարից ելնելով (բայց ոչ պակաս, քան 7,0 հազ. դրամ), և վճարվում են այդ ամիսների

հաշվարկված սոցիալական վճարների համար սահմանված ժամկետներում.

- դ) պայմանագրի (կամ դրա փուլերի) ավարտից հետո հանձնման-ընդունման փաստաթղթերով հիմնավորված փաստացի կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների ըստ ամիս-ների արժեքային այլ բաշխման դեպքում գործատուն ներկայացնում է ճշտված հաշվետվություններ բոլոր այն ամիսների համար, որոնց հաշվարկով (վերահաշվարկով) կատարվում է սոցիալական վճարների փոփոխություն, և դրանց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ:

Եթե աշխատանքները կատարվում կամ ծառայությունները մատուցվում են քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրում նշված ժամկետում, որը պայմանավորված է որոշակի իրադարձությունների (այդ թվում՝ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման, դրանց հանձնման-ընդունման) հետ, որի հետևանքով պայմանագրի հիման վրա հնարավոր չէ որոշել սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտը ըստ ամիսների, կամ՝ եթե քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրից, սկզբնական հաշվառման և վճարման փաստաթղթերից հնարավոր չէ որոշել սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտը ըստ ամիսների, ապա սոցիալական վճարները հաշվարկվում են պայմանագրի շրջանակներում կատարված վճարումներից (վճարման ամիսների համար) և պայմանագրով (կամ դրա փուլերով) նախատեսված աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող հանձնման-ընդունման փաստաթղթերի հիման վրա, ընդ որում՝

- ա) պայմանագրի շրջանակներում կատարված վճարումներից (այդ թվում՝ կանխավճարային ձևով) սոցիալական վճարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով պայմանագրի (կամ դրա փուլերի) կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման փաստաթղթերի տվյալները.
- բ) պայմանագրի (կամ դրա փուլերի) կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման փաստաթղթերի հիման վրա սոցիալական վճարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով պայմանա-

գրի շրջանակներում կատարված վճարումները (այդ թվում՝ կանխավճարային ձևով):

Նշված դրույթները տարածվում են նաև՝

- ա) լրագրողների վրա, որոնք քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրերի հիման վրա տեղեկատվություն են փնտրում, հավաքում, ստանում, պատրաստում, խմբագրում լրատվական գործունեություն իրականացնողների համար.
- բ) քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա մանկավարժական աշխատանքներ կատարողների (ծառայություններ մատուցողների) վրա:

Ձանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ տեղեկությունների կամ հրապարակման համար տրամադրված տեղեկատվության դիմաց վարձատրության բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ այդ մասով սույնիսկան վճարների հաշվարկման համար: Սույնիսկան վճարները հաշվարկվում են տեղեկատվություն տրամադրող Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ կնքված քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրի առկայության դեպքում, եթե պայմանագրով այդ քաղաքացու համար նախատեսվում է վարձատրություն կամ պայմանագրի շրջանակներում այդ քաղաքացուն կատարվում են վճարումներ և այդ գումարները (վարձատրությունը, վճարումները) չեն դիտվում (դիտվելու) որպես ռոյալթի:

Սույնիսկան վճարների հաշվարկման և վճարման կարգը՝

Գործատուները յուրաքանչյուր ամսվա համար սույնիսկան վճարները հաշվարկում և պարտադիր սույնիսկան ապահովագրության բյուջե են փոխանցում (վճարում) մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ):

Գործատուները, յուրաքանչյուր հաշվետու ամսվա արդյունքներով, մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ), իրենց հաշվառման վայրի հարկային մարմին Կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով ներկայացնում են սույնիսկան վճարների հաշվետվություն, որտեղ ներառվում են նաև «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սույնիսկան ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ սույնիսկան վճարների հաշվին գործատուի կողմից հաշվետու ամսում

վճարված ապահովագրական նպաստները (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հղիության ու ծննդաբերության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ), ինչպես նաև վարձու աշխատողի մահվան դեպքում տրվող թաղման նկատառ: ՊՈԱԿ-ները սոցիալական վճարների հաշվետվություն հարկային մարմին չեն ներկայացնում, եթե հաշվետու ամսում չեն հանդիսանում գործատու (չունեն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված /գրավոր/ աշխատող /վարձու աշխատող/ և փաստացի չեն օգտագործում ֆիզիկական անձանց աշխատանքը, ծառայությունները):

Լուծարվող գործատուները սոցիալական վճարների հաշվետվությունը ներկայացնում են և սոցիալական վճարները կատարում են մինչև լուծարման գործընթացի ավարտն ընկած ժամանակաշրջանի համար:

Գործատուն նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված սոցիալական վճարների հաշվետվություններում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային մարմին ներկայացնել սոցիալական վճարների ճշտված հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ: Հարկային մարմինների կողմից գործատուների մոտ իրականացված ստուգումների ընթացքում գործատուի կողմից ներկայացված ստուգվող ժամանակաշրջաններին վերաբերող հաշվետվությունների ճշտում չի իրականացվում (սոցիալական վճարների ճշտված հաշվետվություններ չեն ներկայացվում): Սոցիալական վճարների ճշտված հաշվետվություններ չեն ներկայացվում նաև հարկային մարմինների կողմից կատարված ստուգմամբ ընդգրկված հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստուգված ժամանակաշրջանների համար սոցիալական վճարների գծով պարտավորությունները կարող են ճշտվել միայն գործատուի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Եթե օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սոցիալական վճարները հաշվարկելու և պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե փոխանցելու պարտականությունը դրված է վարձու աշխատողների վրա, ապա գործատուն պարտավոր է մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմին սահմանված ձևով տեղեկություններ հայտնել վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրության

ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մասին: Այդ պահանջը խախտելու համար գործատուն վճարում է տուգանք՝ հարկային մարմին չներկայացրած (կամ ուշ ներկայացրած) յուրաքանչյուր տեղեկության համար 25,0 հազ. դրամի չափով:

Պատասխանատվության նորմերը՝

Գործատուների կողմից սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ ապառքի 0.15%-ի չափով: Սոցիալական վճարների գծով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող 3 տարի հետո:

Սոցիալական վճարների կատարումը ուշացնելու դեպքում հարկային մարմինը (բացառությամբ՝ Կառավարության սահմանված դեպքերի) սոցիալական վճարի վճարման համար սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում սահմանված կարգով ապահովադրին անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան: Այդ հայցից հարկային մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ սոցիալական վճարների գծով պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն:

Սոցիալական վճարների օբյեկտը թաքցնելու (կամ պակաս ցույց տալու) դեպքում ապահովադրից սահմանված կարգով գանձվում է թաքցրած (կամ պակաս ցույց տրված) սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, սոցիալական վճարների օբյեկտը կրկին թաքցնելու (կամ պակաս ցույց տալու դեպքում)՝ սոցիալական վճարների ամբողջ գումարի չափով:

Սոցիալական վճարների հաշվետվությունը սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար ապահովադրից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված սոցիալական վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով (բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի ընդհանուր գումարն է):

Սոցիալական վճարների հաշվետվությունները սխալ կազմելու համար ապահովադրիներից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե չմուծված (կամ պակաս մուծված) սոցիալական վճարի գումարի 10%-ի չափով:

Աշխատողի աշխատանքի ընդունումը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ ամսում հաշվարկում և վճարում է չձևակերպված վարձու աշխատողի համար սոցիալական վճար՝ 60,0 հազ. դրամի չափով:

Չկատարված սոցիալական վճարների պարտավորության չափը 500,0 հազ. դրամ և ավելի կազմելու դեպքում հարկային մարմնի ղեկավարն Կառավարության սահմանած կարգով իրավունք ունի ապահովադրի սոցիալական վճարների պարտավորության համարժեք գույքի վրա արգելանք դնելու մինչև դատարանի կողմից վճռի կայացումը (բացառությամբ՝ օրենքով սահմանված այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը): Արգելանքն առաջնահերթության կարգով կիրառվում է նախ՝ ապահովադրի բանկային հաշիվների, ապա՝ անշարժ գույքի, այնուհետև՝ այլ ակտիվների նկատմամբ: Ապահովադրի գույքի արգելադրումից հետո՝ 30 օրյա ժամկետում, դատարանի վճիռը չսպառնալու դեպքում ապահովադրի գույքը համարվում է արգելանքից հանված:

7. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՆԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

«Արժուքային կարգավորման և արժուքային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի տարածվում մինչև դրա ուժի մեջ մտնելը կնքած պայմանագրերի վրա, սակայն ժամկետային պայմանագրերի երկարաձգման դեպքում, երկարաձգման պահից պայմանագրի դրույթները պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին:

Ռեզիդենտներ են համարվում՝

ա) ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ՝ ձեռնարկատերերի)՝

- որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը (ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրապետությունում 183 օր և ավելի, կամ՝
 - որոնց կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, կամ՝
 - պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ժամանակավորապես աշխատող ֆիզիկական անձինք,
- բ) Հայաստանում պետական գրանցում ստացած (հաշվառված) կազմակերպությունները (նրանց Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը և ներկայացուցչությունները) և անհատ ձեռնարկատերերը,
- գ) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանությունները, հյուպատոսական հիմնարկները, գործերը, ինչպես նաև դրանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ղեկավարները, այլ աշխատակիցներ և նրանց ընտանիքների անդամները,
- դ) միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունները, ինչպես նաև դրանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ղեկավարները, այլ աշխատակիցներ և նրանց ընտանիքների անդամները:

Ոչ ռեզիդենտներն են համարվում.

- ա) ռեզիդենտ չհամարվող ֆիզիկական անձինք (այդ թվում՝ օտարերկրյա պետության պետական ծառայության մեջ գտնվող և Հայաստանի Հանրապետությունում ժամանակավորապես աշխատող ֆիզիկական անձինք,
- բ) օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները ու դրանց (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող) մասնաճյուղերն և ներկայացուցչությունները,
- գ) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները, հյուպատոսա-

կան հիմնարկները, գորքերը և միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև դրանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ղեկավարները, այլ աշխատակիցներ և նրանց ընտանիքների անդամները:

Արժութային գործարքները կարելի է դասակարգել հետևյալ 3 տեսակների՝ ընթացիկ արժութային գործարքներ, կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ:

Ընթացիկ արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող հետևյալ գործարքները (վճարումները)՝ անկախ դրանց գումարային մեծությունից (բացառությամբ՝ վարկերի, փոխառությունների և ուղղակի ներդրումների մարմանն ուղղված փոքրածավալ գումարների վճարումների)՝

- ա) ապրանքների և ծառայությունների ներմուծման կամ արտահանման հետ կապված վճարումները, ինչպես նաև կարճաժամկետ վարկերի և փոխառությունների տրամադրումը,
- բ) վարկերի, փոխառությունների և ներդրումների դիմաց վճարվող տոկոսներն ու շահաբաժինները,
- գ) վարկերի, փոխառությունների և ուղղակի ներդրումների մարմանն ուղղված փոքրածավալ գումարների վճարումները,
- դ) ոչ առևտրային բնույթի փոխանցումները Հայաստանի Հանրապետության տարածք և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս (ներառյալ՝ աշխատավարձի, կենսաթոշակների, ժառանգությունների, ֆինանսական օգնության, նվիրատվությունների) փոխանցումները:

Կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող այն գործարքները, որոնք չեն համարվում ընթացիկ արժութային գործարքներ:

Ընթացիկ արժութային, կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային գործարքների իրականացումը՝

Ընթացիկ արժութային գործարքների իրականացման նկատմամբ սահմանափակում չկա: Կենտրոնական Բանկը կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքների համար կարող է սահմանել կարգ և պայմաններ:

Ռեզիդենտները Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կարող են առանց սահմանափակումների իրականացնել արժու-

քային գործարքներ՝ օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Ոչ ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումների հետ կապված գործարքները կարգավորվում են օրենքներով և միջազգային պայմանագրերով:

Արժույթային արժեքների փոխադրումը, առաքումը, ներմուծումը և արտահանումը՝

Ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները կարող են առանց որևէ սահմանափակման և հայտարարագրման Հայաստանի Հանրապետության տարածք և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս փոխադրել, առաքել, ներմուծել և արտահանել արժույթային արժեքներ (բացառությամբ՝ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված դեպքերի):

Հայաստանի Հանրապետության արժույթով գործարքների իրականացումը՝

Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության դրամով իրականացվում են ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման փողային գնանշումները, մասնավորապես՝

- ապրանքների (գույքի) վաճառքի, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման ու դրանց գովազդներում փողային գնանշումները,
- ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից հրապարակային առաջարկները (հրապարակային պայմանագրերում փողային գնանշումները),
- գույքի անհատույց տրամադրման (օգտագործման) դեպքերում պայմանագրերում և ընդունման-հանձման փաստաթղթերում այդ գույքի գնանշումը (արժեքավորումը),
- պասիվ եկամուտների (շահաբաժիններ, ռոյալթիներ գործառնական կամ ֆինանսական վարձակալություն) գնանշումները (արժեքավորումը) և վճարումները:

Պայմանագրով նախատեսված գույքային սանկյիաների (տույժեր, տուգանքներ) և փոխհատույումների (բացառությամբ՝ ծախսերի փոխհատույման դեպքերի, որոնց վրա տարածվում են արժութային օրենսդրության պահանջները) գնանշման (արժեքավորման) և դրանց վճարման նկատմամբ արժութային սահմանափակումները չեն տարածվում:

Այն գործարքները, որոնց գնանշումը պետք է կատարվի Հայաստանի Հանրապետության դրամով՝ պայմանագրերում և սկզբնական (հաշվառման) փաստաթղթերում կարող է նշվել միայն արտարժույթի փոխարժեքը (այլ ոչ թե՝ գների գուգահեռաբար արտահայտումը նաև արտարժույթով):

Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները (ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները) ընդունվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնետիրական կապիտալում փողային ներդրումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

Հայաստանի Հանրապետության տարածքում փողային շահումները կարող են գովազդվել և տրվել միայն Հայաստանի Հանրապետության դրամով:

Հայաստանի Հանրապետությունում արտարժույթով գործարքների իրականացումը՝

Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն առանց սահմանափակումների իրականացնելու արտարժույթի առք ու վաճառք՝ մասնագիտացված անձանց միջոցով, որոնք իրենք են սահմանում արտարժույթի առք ու վաճառքի գործարքների փոխարժեքը և ծավալները:

Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների) ընթացիկ արժույթային գործարքների դիմաց վճարումները և կապիտալի շարժի ու ֆինանսական արժույթային գործարքները (կանխիկ ու անկանխիկ) իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով, բացառությամբ՝

- իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ընթացիկ արժույթային գործարքների դիմաց անկանխիկ վճարումների և կապիտալի շարժի ու ֆինանսական արժույթային անկանխիկ գործարքների,

- Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ առևտրային բնույթի գործարքների (բացառությամբ՝ աշխատավարձի վճարումների),
- ռեզիդենտների միջև նվիրաբերության (նվիրատվության) և ժառանգության գործարքների,
- Կենտրոնական Բանկի սահմանած դեպքերում միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների համար վճարումների,
- բանկերը, վարկային կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրենց վերապահված ֆինանսական (այդ թվում՝ ավանդային, վարկային) գործառնությունների իրականացման:

Կարևոր չէ, թե վճարումը որտեղ է իրականացվում, այլ կարևոր է, թե ինչպիսի գործարքի դիմաց է կատարվում վճարումը (օրինակ՝ եթե գործարքը կատարվում է երկու ռեզիդենտների միջև Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա վճարումը կանխիկ կամ անկանխիկ պետք է կատարվի Հայաստանի Հանրապետության դրամով, եթե նույնիսկ վճարման ենթակա գումարը հաշվեգրված է օտարերկրյա բանկում այդ ռեզիդենտների բանկային հաշիվներին):

Ուշադրություն. Օրենքի իմաստով «ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) արտահանում» և «ապրանքների (ծառայությունների, աշխատանքների) ներմուծում հասկացությունները կիրառվում են միայն «ռեզիդենտ - ոչ ռեզիդենտ» հարաբերություններում: Արտահանման հետ կապված գործարքներում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով, եթե ոչ ռեզիդենտը հանդիսանում է տնտեսավարող սուբյեկտ և վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով: Ներմուծման հետ կապված գործարքներում գնանշումները կատարվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և, հետևաբար՝ կարող են կատարվել արտարժույթով :

Ռեզիդենտների միջև իրականացվող գործարքները համարվում են իրականացված Հայաստանի Հանրապետության տարածքում, եթե բացակայում են հիմքեր դրանք դիտելու Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս իրականացված: Մասնավորապես՝ եթե ռեզիդենտների միջև առևտրային պայմանագիրը (ապրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատա-

րում) կնքված է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ապա այդ պայմանագրում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով (անկախ այն հանգամանքից, թե պայմանագրից բխող գործարքները փաստապի կատարվելու են Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս), իսկ այդպիսի եզրակացություն անելու հիմքերի բացակայության դեպքում պայմանագիրը համարվում է կնքված Հայաստանի Հանրապետության տարածքում և, հետևաբար՝ այդ պայմանագրում գնանշումները պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետության դրամով: Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման դիմաց փողային վճարումները պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետության դրամով:

Ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործարքները համարվում են իրականացված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, եթե բացակայում են հիմքեր դրանք դիտելու Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված: Մասնավորապես՝ եթե ոչ ռեզիդենտների միջև առևտրային պայմանագիրը (ապրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում) կնքված է Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա այդ պայմանագրում գնանշումները պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետության դրամով (անկախ այն հանգամանքից, թե պայմանագրից բխող գործարքները փաստապի կատարվելու են Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս), իսկ այդպիսի եզրակացություն անելու հիմքերի բացակայության դեպքում պայմանագիրը համարվում է կնքված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և, հետևաբար՝ այդ պայմանագրում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով: Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման դիմաց փողային վճարումները կարող են կատարվել արտարժույթով (կանխիկ, անկանխիկ):

Պատասխանատվությունը՝

Արժույթային օրենսդրության պահանջների խախտումների համար կիրառվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ, մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետությունում ապրանքների իրացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փողային գնանշումները, ինչպես նաև այդ գործարքների դիմաց փողային վճարումները Հայաստանի Հանրապետության դրամով իրականացնելու պահանջը չկատարելը, ինչպես նաև արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ պահանջները չկատարելը առաջացնում են տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով (ընդ որում՝ յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտումը համարվում է մեկ խախտում):

8.

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՇԱՐԿԸ

Հայաստանի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) ներդրման պահ է ընդունված համարել Հայաստանի Հանրապետության Նախագահի 1992 թվականի հունվարի 4-ի «Ձեռնարկություններից, կազմակերպություններից և քաղաքացիներից գանձվող հարկերի մասին» ՆՆՀ-49 հրամանագիրը (որը հիմնականում հռչակագրային բնույթի էր և գրեթե չէր կիրառվում): 1993 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտավ «Ավելացված արժեքի հարկի մասին» առաջին օրենքը, որը Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ի բնագավառի օրենսդրական կարգավորման առաջին իրական քայլն էր, և հետխորհրդային Հայաստանի տնտեսական իրավիճակի ճիշտ արտացոլանքը: 1997 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտավ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքը, որն էլ գործում է առ այսօր: Իսկ ընդհանրապես, Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ի օրենսդրական կարգավորման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել 3 հիմնական փուլերի՝

- ԱԱՀ-ի համակարգի ներդրման և կայացման փուլ՝ 1992-1997 թվականներ,
- ԱԱՀ-ի համակարգի հիմնարար բարեփոխման և ընդունված միջազգային չափանիշներին համապատասխանեցման փուլ՝ 1997-2000 թվականներ,

- ԱԱՀ-ի վարչարարության արդյունավետության ու գանձարանային նշանակության բարձրացմանն ուղղված միջոցառումների փուլ՝ սկսած 2000 թվականից:

ԱԱՀ-ի հասկացությունը՝

Տնտեսագիտության մեջ և օրենսդրական տեսանկյունից գոյություն ունեն ԱԱՀ-ի բազմաթիվ սահմանումներ: Դրանք բոլորն էլ իրավական և բովանդակային առումներով ընդհանուր առմամբ հանգում են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով տրված սահմանմանը, համաձայն որի, ԱԱՀ-ը պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է (ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ծառայությունների մատուցման բոլոր փուլերում):

ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ են համարվում հետևյալ գործարքների (գործառնությունների)՝ ամբողջ արժեքը (իրացման շրջանառությունը)՝

- ապրանքների մատակարարումը,
- ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը),
- անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը,
- «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը:

Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (առանց ԱԱՀ-ի): Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում այդ ապրանքների մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

Անհրաժեշտ է նշել այն դեպքերը, երբ ըստ էության տեղի ունեն տեսականորեն ԱԱՀ-ով հարման ենթակա գործարքներ (գործառնություններ), սակայն դրանք ենթակա չեն ԱԱՀ-ով հարկման (հարկման օբյեկտ չեն համարվում), մասնավորապես՝

- Կառավարության որոշումների հիման վրա հարկ վճարողների կողմից՝
 - ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները,
 - մասնակի հատուցմամբ գործարքները՝ հարկվող շրջանառության և ստացված հատուցման տարբերության մասով,

- երաշխիքային ժամանակահատվածում իրացված ապրանքների իրացնողի կողմից անհատույց մատուցվող սպասարկման ծառայությունները,
- տիրագուրկ, ժառանգության իրավունքով պետությանն անցած արժեքների իրացման շրջանառությունը, ինչպես նաև պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման հետ կապված՝ պետական բյուջեի տրվող սուբսիդիաները, սուբվենյիաները, դրամաշնորհները,
- բռնագրավման կամ նվիրատվության ձևով գույքի (կամ գույքային իրավունքի) օտարումը պետությանը,
- ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման իրերի ներմուծումը:

ԱԱՀ-ի հաշվանցումը՝


Սպառման հարկերի մնացած մյուս բոլոր տեսակների համեմատությամբ ԱԱՀ-ի գլխավոր առանձնահատկություններից մեկը հաշվանցումների համակարգն է: Հաշվառման տեսանկյունից գոյություն ունի ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման 4 տարբերակ՝ գումարման ուղղակի մեթոդ (կամ հաշվեկշռային մեթոդ), գումարման անուղղակի մեթոդ, հանման (նվազեցման) ուղղակի մեթոդ և հանման (նվազեցման) անուղղակի մեթոդ: Սակայն, ԱԱՀ կիրառող երկրների գերակշռող մասում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում) ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման համար կիրառվող մեթոդը հաշվանցման (հաշիվ-ապրանքագրերի) մեթոդն է: Այս եղանակով հաշվանցումներ կատարելու էությունը կայանում է հետևյալում՝

ԱԱՀ վճարող անձանց կողմից հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարվում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները, որից *հաշվանցվում (պակասեցվում)* են արտադրական և առևտրային նպատակներով նույն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռքբերված ապրանքների (ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների) և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Ընդ որում՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք կարող են հաշվանցում-

ներ կատարել միայն **ԱԱՀ վճարող համարվելու պահից հետո** ձեռք բերված (ներմուծված) ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված (մաքսային մարմինների կողմից գանձված) ԱԱՀ-ի գումարները:

Հարկային հաշիվը հանդիսանում է ԱԱՀ-ի ամբողջ համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Հարկային հաշիվ է համարվում ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող սահմանված կարգով լրացված հաշվարկային փաստաթուղթը (պարտադիր տվյալների և վավերապայմանների նշումով), որը ԱԱՀ վճարողները պարտավոր են դուրս գրել ԱԱՀ-ով հարկվող ապրանքներ մատակարարելիս և ծառայություններ մատուցելիս:

ԱԱՀ-ի գործողության շղթան՝ արտադրողից մինչև վերջնական սպառող, հաշվանցյման սխեման և բյուջետային մուտքերը ներկայացնենք հետևյալ օրինակով: Շղթայի յուրաքանչյուր օղակի համար շահութաբերության մակարդակն ընդունվել է 15%, և սխեմայի պարզության համար ենթադրվում է, որ շղթայի միջանկյալ 3 կազմակերպություններն ապրանքի ձեռքբերման հետ կապված այլ ծախսեր (այդ թվում՝ հաշվանցյման ենթակա գումարներ) չունեն:



Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ԱԱՀ վճարող համարվող տնտեսվարող սուբյեկտները հաշվանցումներ կարող են կատարել միայն որոշակի պայմանների առկայության դեպքում: Այսպես՝ արտադրական և այլ առևտրային նպատակներով Հայաստանի Հանրապետու-

քյան տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կարող են հաշվանցվել միայն, եթե դիմաց վճարումը կատարվել է բանկային փոխանցմամբ (ոչ բանկային փոխանցումներով վճարված գումարները ներկայումս ենթակա չեն հաշվանցման):

Հաշվանցումներ կատարելու իրավունքի հետ կապված մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով ուչ ստացված հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ ստացվել է հարկային հաշիվը, (բացառությամբ՝ էլեկտրաէներգիայի ձեռք բերման դեպքերի): Իսկ ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է **վճարումը**:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման՝

- ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից,
- հարկվող օբյեկտ չհամարվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների (գործառնությունների) գծով, ինչպես նաև այն գործարքների գծով, որոնց վրա չի տարածվում օրենքի գործողությունը: Այս դեպքում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները միացվում են ապրանքները ձեռք բերելու գնին կամ արտադրության ու շրջանառության ծախսերին, իսկ նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում արդեն իսկ հաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման և պետք է միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման գնին կամ արտադրության ու շրջանառության ծախսերին,
- ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և այդ գործարքների մասով ձեռքբերումների (ներմուծումների) գծով մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաք-

սային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարների միջև առաջացող բացասական տարբերությունը,

- ոչ իրացման նպատակով ձեռք բերված (ներմուծված) մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման վայրը՝

ԱԱՀ-ով հարկվող գործարքների որոշման հարցում կարևոր նշանակություն ունի ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման վայրի որոշման հարցը: Որպես ընդհանուր սկզբունք, ապրանքները համարվում են մատակարարված Հայաստանի Հանրապետությունում, եթե դրանք առաքվել (կամ հանձնվել) են գնորդին Հայաստանի Հանրապետության տարածքում կամ արտահանվել են Հայաստանի Հանրապետության տարածքից: Ներմուծված ապրանքները համարվում են մատակարարված Հայաստանի Հանրապետությունում դրանց ներմուծման պահից: Ծառայությունների դեպքում, դրանք համարվում են մատուցված Հայաստանի Հանրապետությունում, եթե ծառայությունների մատուցման վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Ծառայությունների մատուցման վայր է համարվում այն տեղը, որտեղ ծառայություն մատուցող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, իսկ այդպիսի վայրի բացակայության կամ որոշման անհնարինության դեպքում՝ նշված անձի գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը): Սակայն, կան մի շարք էական բացառություններ ծառայությունների մատուցման վայրի որոշման հարցում, մասնավորապես՝

- անշարժ գույքի հետ կապված ծառայություններ (այդ թվում՝ վարձակալություն, առք ու վաճառքի գործակալների և փորձագետների ծառայություններ, շինարարության նախապատրաստման և իրականացման ծառայություններ, նախագծման, հետախուզման, վերահսկողության և այլ հարակից ծառայություններ),
- տրանսպորտային ծառայություններ, փոխադրամիջոցների վարձակալություն,
- մշակույթի, արվեստի, սպորտի, գիտության, կրթության և առողջապահության ոլորտներում մատուցվող ծառայություններ (ներ-

րառչյալ՝ դրանց կազմակերպման համար անհրաժեշտ ծառայությունները),

- օժանդակ տրանսպորտային ծառայություններ (ապրանքների բեռնում, բեռնաթափում, բեռների մշակում, պահպանում և այլ), շարժական գույքի գնահատման, նորոգման, տեղակայման և համանման այլ ծառայություններ,
- արտոնագրերի, լիցենզիաների, հեղինակային իրավունքի, ապրանքանշանների և համանման այլ իրավունքների՝ այլ անձանց փոխանցման, գովազդային, խորհրդատվական, ինժեներական, իրավաբանական, հաշվապահական, փորձագիտական, թարգմանչական և համանման այլ ծառայություններ, տվյալների մշակման, ծրագրային ապահովման և տեղեկատվության հաղորդման ծառայություններ,
- Հայաստանի Հանրապետության տարածքից օտարերկրյա պետության տարածք և օտարերկրյա պետության տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք մատուցվող փոստային և էլեկտրակապի ծառայություններ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ԱԱՀ վճարող համարվող անձինք առանձին գործարքների մասով կարող են չլրել ԱԱՀ-ի հաշվարկման (վճարման) պարտավորություն այն դեպքերում, երբ նրանց կողմից իրականացվող գործարքների վրա չի տարածվում օրենքի գործողությունը (օրինակ՝ եթե ԱԱՀ վճարող անձը Ռուսաստանի Դաշնությունում ձեռք բերված ապրանքները մատակարարել է Բելգիա, ապա տվյալ գործարքի վրա չեն տարածվում օրենքի դրույթները և, հետևաբար՝ այդ գործարքի մասով Հայաստանի Հանրապետությունում անձը ԱԱՀ-ի գծով պարտավորություններ չի կրում):

ԱԱՀ-ի «նշանակման» և «ծագման» վայրի սկզբունքները՝

ԱԱՀ-ի քաղաքականության առանցքային հարցերից ԱԱՀ-ի գանձման՝ «ըստ նշանակման վայրի» կամ «ըստ ծագման վայրի» սկզբունքի կիրառման հարցն է:¹

¹ Գ-ոլորտում ունի նաև այսպես կոչված «ծագման երկրի սկզբունքի սահմանափակ կիրառում» հասկացություն: Հարկման այսպիսի մոտեցում են ցույցաբերում հիմնականում տնտեսական կամ մաքսային միությունների անդամ-երկրները (որպես վառ օրինակ կարող է ծառայել Եվրոպական Միությունը), ինչպես նաև առանձին երկրներ՝ ռազմավարական նշանակության որոշ ապրանքների (նավթ, գազ և այլն) նկատմամբ:

Նշանակման երկրի սկզբունքի կիրառումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ ԱԱՀ-ն հանդիսանալով ներքին սպառման անուղակի հարկ, նախատեսված է երկրի ներսում ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանն ուղղված սպառողների ծախսերը հարկելու համար: Այդ սկզբունքի կիրառման էությունը կայանում է նրանում, որ ապրանքները ԱԱՀ-ով հարկվում են այն երկրում, որտեղ նրանք վերջնականապես սպառվում են, այլ ոչ այնտեղ, որտեղ արտադրվել են:

Ի տարբերություն դրա, ԱԱՀ-ի գանձման «ըստ ծագման վայրի» սկզբունքի կիրառման պարագայում ապրանքները ենթակա են ԱԱՀ-ով հարկման ապրանքների և ծառայությունների արտադրության (ծագման) երկրում:

Այլ կերպ ասած, ԱԱՀ-ի գանձման «ըստ նշանակման վայրի» սկզբունքը կիրառող երկրներում արտահանվող ապրանքները, որպես համընդհանուր սկզբունք, հարկվում են ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով (այսինքն, ապրանքներ արտահանողներին փոխհատույվում է այդ ապրանքների ձեռքբերման կամ արտադրության համար իրենց մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները), իսկ ներմուծվող ապրանքները ենթակա են հարկման ներմուծող (սպառման) երկրում:

ԱԱՀ-ից ազատումը՝

ԱԱՀ-ի գծով արտոնությունների (մասնավորապես՝ ԱԱՀ-ից ազատման) առանձնահատկությունը կայանում է նրանում, որ «ԱԱՀ-ից ազատվելը» ամենևին չի նշանակում ազատում հարկի վճարման պարտավորությունից՝ ազատում բառի բուն իմաստով: ԱԱՀ-ից ազատված մատակարարումների դեպքում ազատվում է միայն մատակարարի կողմից արտադրության (կամ ապրանքաշրջանառության) ընթացքում ավելացված արժեքը, սակայն ԱԱՀ վճարվում է արտադրության համար անհրաժեշտ ձեռքբերումների դիմաց՝ առանց հաշվանցման իրավունքի: Հետևաբար՝ երբ խոսք է գնում ԱԱՀ-ից ազատված մատակարարների կամ ապրանքատեսակների մասին, պետք է նկատի ունենալ, որ նրանք ազատված են միայն ԱԱՀ-ի հաշվարկման և գանձման, այլ ոչ թե դրա վճարման պարտավորությունից:

ԱԱՀ-ի արտոնությունները, կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝

ա) մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի իրականացումը.

ԱԱՀ-ից ազատվում են, մասնավորապես՝ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, միջազգային, օտա-

րերկրյա և Հայաստանի Հանրապետության հասարակական (ներառյալ՝ բարեգործական), կրոնական և նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում:

Օրենսդրությամբ (այդ թվում՝ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրերի տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ԱԱՀ-ից ազատվող ապրանքների և ծառայությունների շրջանակները համապատասխան ընթացակարգով որոշում է Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովը:

բ) կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտը.

Արտոնություններ սահմանված են հանրակրթական դպրոցների, մանկա-պատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի դպրոցների, մարզադպրոցների, պրոֆտեխնիկական ուսումնարանների, որակավորման և վերաորակավորման միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար՝ ուսման վարձի մատով, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքները:

Ուսման վարձերի մատով արտոնությունները տարածվում են միայն Կրթության և Գիտության Նախարարության հաստատված պետական կրթական ծրագրերի վրա, որոնց թվին են դասվում հանրակրթական, մասնագիտական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական ծրագրերը²: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ուսման վարձերի գծով արտոնությունը չի տարածվում վերոնշյալ ուսումնական հաստատությունների կամ այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից կազմակերպվող օտար լեզուների, համակարգչային ծրագրերի ուսուցման, նմանատիպ այլ դասընթացների վրա:

Առողջապահական ոլորտում ԱԱՀ-ից ազատվում են դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և պարագաների, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում՝ կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդ-

2 Տես՝ ՀՀ ՀՏ պետի 16.11.1998թ. N01/55 հրամանով հաստատված՝ «Ավելայված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2, 3 և 4 կետերի դրույթների վերաբերյալ» հրահանգը:

ների կողմից պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը³:

զ) գյուղատնտեսության ոլորտը.

ԱԱՀ-ից ազատվում են անասնաբուժական դեղամիջոցների իրացումը, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունում օգտագործվող թունաքիմիկատների, պարարտանյութերի, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին, ինչպես նաև արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը⁴: Նշված արտոնությունները ուժի մեջ են մինչև 2009թ. հունվարի 1-ը:

ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկումը՝

ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկումը⁵, ի տարբերություն ԱԱՀ-ից ազատման (երբ «ԱԱՀ-ից ազատված արտադրողը» ԱԱՀ է վճարում իր արտադրության համար անհրաժեշտ ձեռքբերումների դիմաց՝ հետագայում չունենալով դրանց հաշվանցյալ իրավունք) գրոյական դրույթաչափով հարկման դեպքում արտադրողին ամբողջությամբ փոխհատուցվում են իր կողմից այդ արտադրանքի արտադրության համար երկրի ներսում մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները, և նա իրականում է ազատվում այդ հարկից: Մասնագետների կողմից նման մոտեցումը շատ դեպքերում անվանվում է նաև որպես «իրական ազատում»:

ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկումը գործարքների իրացման շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափի կիրառումն է:

Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով հարկվող հիմնական գործարքներն (գործառնություններն) են՝

- Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության

3 Տես՝ ՀՀ ՀՏ պետի 27.08.1997թ. N767 հրամանով հաստատված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 19 կետի դրույթների վերաբերյալ» հրահանգը:

4 Տես՝ ՀՀ ՀՏ պետի 03.03.1998թ. N01/15 հրամանով հաստատված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5, 6 և 7 կետերի դրույթների վերաբերյալ» հրահանգը:

5 Չրոյական դրույթաչափը, որպես հարկման ձև, առաջին անգամ կիրառվել է Նիդերլանդներում:

նկատմամբ (ինչպես նաև միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի լցավորման համար վառելանյութի ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարման նկատմամբ), Հայաստանի Հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումների նկատմամբ:

- օդանավակայաններում մաքսային և անձնագրային հսկողության տարածքից հետո հատուկ առանձնացված վայրերում միջազգային երթուղիներով մեկնող ուղևորներին ապրանքների մանրաձախ վաճառքի նկատմամբ, եթե այդ ապրանքները մինչև վաճառքի դրվելը անցել են մաքսային ձևակերպում՝ ներքին տարածքից ապրանքների արտահանման համար Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով (“Duty Free” խանութներ),
- միջազգային երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների սպասարկման (ներառյալ՝ աերոնավիգացիոն, թռիչք-վայրէջքի), նորոգման, վերասարքավորման, ուղևորների, ուղեբեռների, բեռների և փոստի սպասարկման ծառայությունների և փոխադրման ընթացքում ուղևորներին մատուցվող ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ,
- այն ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, որոնց մատուցման վայրը չի գտնվում Հայաստանի Հանրապետության տարածքում,
- դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակով ներմուծվող կամ հանրապետության տարածքում ձեռք բերվող ապրանքների, նրանց մատուցվող ծառայությունների նկատմամբ:

ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջան, հաշվարկների, տեղեկությունների ներկայացման և վճարումներ կատարելու կարգը և ժամկետները՝

ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջան (ԱԱՀ-ի գումարների պետական բյուջե վճարման և ԱԱՀ-ի հաշվարկների ներկայացման) է համար-

վում յուրաքանչյուր եռամսյակը: Բացառություն են կազմում այն ԱԱՀ վճարողները, որոնց կողմից իրականացված գործարքներից հասույթը նախորդող օրացույցային տարում գերազանցել է 60,0 մլն. դրամը՝ նրանց համար ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Ընդ որում՝ 60 մլն. դրամը որոշելիս հաշվի է առնվում ԱԱՀ-ով հարկվող գործարքների ընդհանուր հասույթը, անկախ նրանից թե այդ գործարքները ինչպես են հարկվել՝ հարկի 20% թե 0% դրույթաչափով, համարվել են ԱԱՀ-ով չհարկվող թե ԱԱՀ-ից ազատված, հարկվել են պարզեցված հարկով թե հաստատագրված վճարներով:

ԱԱՀ վճարողները սահմանված ժամկետներում իրենց գրանցման (հաշվառման) վայրի հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի հաշվարկներ (օրենքով սահմանված դեպքում՝ նաև ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկներ): ԱԱՀ-ի հաշվարկների ներկայացումը, ինչպես նաև հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանից հաջորդող ամսվա 20-ը:

Ձեռնարկատիրական գործունեություն վարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, մինչև դրան հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ), իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում տեղեկություններ՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից դուրս գրված (գնորդներին տրված) և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ: Այդ տեղեկություններում ԱԱՀ վճարողը ներառում է տեղեկություններ միայն այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում ներառված հարկվող շրջանառության արժեքը գերազանցում է Կառավարության սահմանած չափը (2005 թվականի հուլիսի 1-ից՝ 100,0 հազ. դրամը /նախկին 500,0 հազ. դրամի փոխարեն/):

Պատասխանատվությունը՝

Սահմանված կարգի խախտումով հարկային հաշիվների լրացման համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ փաստաթղթերում հաշվարկված ԱԱՀ-ի 10%-ի չափով:

ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը թաքցնելու (կամ պակաս ցույց տալու) համար վճարողներից գանձվում է թաքցված (կամ պակաս ցույց տրված) ԱԱՀ-ի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով: Այդ տուգանքը կիրառվում է նաև հարկային գործակալի պարտավորությունը չկատարելու, ինչպես նաև այն դեպքում, երբ հարկային տեսչության մարմինների կողմից կատարվող ստուգման արդյունքում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար չի

առաջանում՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցելու հետևանքով (պակաս հաշվարկված կամ ավել հաշվանցված /պակասեցված/ ԱԱՀ-ի գումարների նկատմամբ):

Սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները չներառելու (չներկայացնելու) դեպքում վճարվում է տուգանք՝ սխալ ներկայացված յուրաքանչյուր տեղեկության (հարկային հաշիվի) համար 5,0 հազ. դրամի չափով: Միաժամանակ, հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա՝ մատակարարներից ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք չեն արտացոլվել ներկայացված տեղեկություններում կամ որոնց վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, ենթակա չեն հաշվանցման այդ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն կարող են հաշվանցվել **այդ տեղեկությունները ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանում**, եթե դրանք չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներին:

Անապրանք փաստաթղթերի օգտագործման միջոցով, ինչպես նաև ԱԱՀ-ից ազատված կամ հարկման օբյեկտ չհանդիսացող, առաջին չ և անվավեր ճանաչվող գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման այն հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով, որում իրականացվել են այդ գործարքները (կատարվել է հաշվանցում): Հաշվանցված ԱԱՀ-ի գումարների սահմանված կարգով չձևակերպելը (չպակասեցնելը) դիտվում է որպես ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման (պակասեցման) խախտում:

9.

ԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի տարբերություն տնտեսական (այդ թվում՝ հարկային) դաշտը կարգավորող մի շարք այլ օրենքների, այս «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը առընչվում է տնտեսական գործունեություն իրականացնող գրեթե բոլոր կազմակերպություններին՝ անկախ սեփականության և կազմակերպական իրավական ձևից:

Դրամարկղային գործառնությունները իրականացվում են դրամարկղի կամ հաշվետու անձանց միջոցով: Այդ գործառնությունների իրականացման, այդ թվում՝ դրանց փաստաթղթավորման և դրամարկղային գրքի վարման կարգը սահմանված է Կառավարության 08.10.2003թ. «Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1408-Ն որոշմամբ:

Օրենքով սահմանվում են նաև սահմանափակումներ կանխիկ դրամով վճարումների նկատմամբ, մասնավորապես՝

- ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը, սկսած 2005թ. հունվարի 1-ից, չպետք է գերազանցի 300,0 հազ. դրամը,
- մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը՝ սկսած 2005թ. հունվարի 1-ից, չպետք է գերազանցի 3,0 մլն. դրամը:

Այս սահմանափակումները չեն տարածվում կազմակերպության դրամարկղից կատարվող հետևյալ վճարումների վրա՝ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, նպաստներ, կրթաթոշակներ, կենսաթոշակներ և այլ համանման վճարումներ, գործուղման և դաշտային բավարարման նպատակով կատարվող վճարումներ, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումներ, ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր քաղաքացիա-իրավական պայմանագրերի համաձայն կազմակերպությանը մատուցված ծառայությունների և կազմակերպության համար կատարված աշխատանքների դիմաց կատարվող վճարումներ և այլն:

Սահմանափակումներ են նախատեսված նաև դրամարկղից առհաշիվ տրվող կանխիկ գումարների նկատմամբ: Այսպես՝ առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե այդ գումարը ստացող անձի կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություն դեռևս չի ներկայացվել (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել):

Ուշադրություն. Եթե իրավական ակտերով պետական հիմնարկների կանխիկ դրամով վճարումների և առհաշիվ տրված գումարների նկատմամբ սահմանված են այլ սահմանափակումներ, ապա հիշյալ սահմանափակումների փոխարեն գործում են այդ սահմանափակումները:

Կազմակերպության դրամարկղ(ներ)ում պահվող արժեքների պահպանման, ինչպես նաև փոխադրման անվտանգության ապահովության պատասխանատվությունը կրում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը, եթե կազմակերպության կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ այդ պատասխանատվությունը չի դրված այլ անձի վրա: Կանխիկ դրամի պահպանման գործում պարտականություններ ունի նաև գանձապահը, որն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողնումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից:

10. ԳՈՒՅՔԱԽԱՐԿ

Գույքահարկը սեփականության իրավունքով հարկ վճարողներին պատկանող՝ հարկվող օբյեկտ համարվող գույքի համար համայնքի բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Գույքահարկ հաշվարկվում և վճարվում է նաև՝

- օրենքով սահմանված կարգով սեփականության իրավունքի ճանաչում ստացած կամ օրենսդրությանը համապատասխան նոր կառուցված, ձեռք բերված այն շինությունների համար, որոնք դեռևս չեն ստացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում,

- սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցների) համար:

Ուշադրություն. ՊՈԱԿ-ները սեփականության իրավունքով իրենց պատկանող (հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադիրի կողմից որպես սեփականություն հանձնվող, ինչպես նաև ՊՈԱԿ-ի գործունեության ընթացքում ստեղծված և ձեռք բերված) գույքի համար կրում են գույքահարկի պարտավորություններ: Հիմնադրի կողմից ՊՈԱԿ-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի համար գույքահարկի պարտավորություններ չեն առաջանում:

Գույքահարկով հարկվող օբյեկտը՝

Շենքերը և շինությունները - անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ (ամառանոց), բազմաբնակարան բնակելի շենք, բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածք, ավտոտնակ, հասարակական նշանակության շինություն, արտադրական նշանակության շինություն, անավարտ (կիսակառույց) շինություն, օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված, սակայն դեռևս իրավունքների պետական գրանցում չստացած շինություններ, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքեր և շինություններ (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ):

Փոխադրամիջոցները - ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, ջրային փոխադրամիջոց, մոտոցիկլետ:

Ուշադրություն. Շինությունների դասակարգումն ըստ նպատակային նշանակության որոշվում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից և արտացոլվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականում:


Գույքահարկով հարկման բազան՝

Շինությունների հարկման բազան օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքն է (արտահայտված դրամներով): Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների (վերա)գնահատումը կատար-

վում է 3 տարին մեկ անգամ և կադաստրային արժեքները հիմք են ընդունվում հետագա 3 տարիների գույքահարկը հաշվարկելու համար: (Վերա)գնահատման տարիների միջև ընկած ժամանակահատվածում շինության ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային նշանակության փոփոխությունների, ինչպես նաև սեփականության իրավունքով շինություն ձեռք բերելու դեպքերում գնահատված կադաստրային արժեքները հիմք են ընդունվում մինչև շինությունների հաջորդ գնահատումը:

Փոխադրամիջոցների հարկման բազան դրանց քաշող շարժիչի հզորությունը (արտահայտված ձիաուժերով կամ կիլովատերով): Եթե փոխադրամիջոցի վրա առկա են մեկից ավելի քաշող շարժիչներ, ապա հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:


ՀԱՍԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՁԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՇԱՐԿԸ



ՀԱՐԿՈՂ ՕՐՅԵԿՏ ՀԱՍԱՐԿՈՂ ԱՅԼ ԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՇԱՐԿԸ

Հարկման բազան (կադաստրային արժեք)	Տարեկան դրույքաչափ
մինչև 3,0 մլն. դրամը ներառյալ	հարկման բազայի 0%
3,0 մլն. դրամից մինչև 10,0 մլն. դրամը (ներառյալ)	100 դրամ գումարած հարկման բազայի 3,0 մլն. դրամը գերազանցող գումարի 0.1%
10,0 մլն. դրամից մինչև 20,0 մլն. դրամը (ներառյալ)	7100 դրամ գումարած հարկման բազայի 10,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.2%
20,0 մլն. դրամից մինչև 30,0 մլն. դրամը (ներառյալ)	27100 դրամ գումարած հարկման բազայի 20,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.4%
30,0 մլն. դրամից մինչև 40,0 մլն. դրամը (ներառյալ)	67100 դրամ գումարած հարկման բազայի 30,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.6%
40,0 մլն. դրամից ավելի	127,100 դրամ գումարած հարկման բազայի 40,0 մլն. դրամը գերազանցող մասի 1.0%

**ԱԿՏՈՒՌՔԻ ԼԱՅՈՒՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳՈՒՅՆԱՆԱՐԿ**



Ուշադրություն. Նշվածը չի վերաբերվում՝

- ա) նոր կառուցված (ձեռք բերված) և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված (սակայն դեռևս իրավունքների պետական գրանցում չստացած) շինություններին,
- բ) սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերին և շինություններին (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներին):

Այդ հարկվող օբյեկտների համար գույքահարկի պարտավորությունը՝

- առաջանում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից դրանց հաշվառման և գնահատման վերաբերյալ տեղեկությունները գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին տրամադրելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից,
- դադարում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնում դրանց հաշվառումից հանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

Կազմակերպությունների գույքահարկի հաշվարկման ընդհանուր կարգը՝

Կազմակերպությունները գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն՝ ելնելով հարկման բազայից և դրույքաչափերից (հաշվի առնելով արտոնությունները): Գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը:

Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների մասով գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին են հանդիսանում հարկային մարմինները (առանց ժամկետների սահմանափակման), իսկ մնացած դեպքերում.

- ա) 2004 թվականի հունվարի 1-ից՝ Երևան քաղաքի թաղային համայնքները (2004 թվականի ընթացքում հարկային մարմինների հետ համատեղ).
- բ) 2005 թվականի հունվարի 1-ից՝ քաղաքային համայնքները (2005 թվականի ընթացքում հարկային մարմինների հետ համատեղ).
- գ) 2006թ. հունվարի 1-ից՝ բոլոր գյուղական համայնքները:

Գույքահարկի եռամսյակային հաշվարկները մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ) ներկայացվում են՝

- համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների համար՝ կազմակերպության հաշվառման վայրի հարկային մարմին,
- համայնքի վարչական սահմաններում գտնվող շինությունների համար՝ դրանց գտնվելու վայրի հաշվառող մարմին (առանձնացված ըստ համայնքների՝ յուրաքանչյուր համայնքում գտնվող շինության համար ներկայացվում է առանձին հաշվարկ),
- փոխադրամիջոցների համար՝ կազմակերպությունների պետական գրանցման վայրի համապատասխան հաշվառող մարմին:

Հաշվարկված գումարները յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը (ներառյալ), վճարվում են՝

- համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ պետական բյուջե,
- համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ շինության գտնվելու վայրի համայնքի բյուջե,
- փոխադրամիջոցների համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության ըստ իրավաբանական հասցեի գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե:

Գույքահարկի արտոնությունները՝

Գույքահարկից ազատվում են գծային ինժեներատրանսպորտային շինությունները, ջրամբարները, պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկվող օբյեկտ համարվող շինությունները:

Գույքահարկ վճարողներին արտոնություններ տրամադրելու իրավունք ունի նաև համայնքի ավագանին՝ տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10%-ի չափով:

Գույքահարկ վճարողները պարտավոր են հաշվառող մարմին ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը:

Ուշադրություն. *Եթե գույքահարկով հարկվող օբյեկտի համար հաշվետու ժամանակաշրջանում գույքահարկի պարտավորության փաստացի ամիսների թիվը պակաս է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ամիսների թվից, ապա տվյալ հարկվող օբյեկտի մասով*

օրենքով սահմանված գույքահարկի արտոնությունները հաշվի են առնվում գույքահարկի պարտավորության փաստացի ամիսների քվին համամասնորեն:

Պատասխանատվությունը օրենքի պահանջները խախտելու համար՝

Օրենքի պահանջները խախտելու համար կիրառվում են հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր պատասխանատվության միջոցները, հետևյալ առանձնահատկությամբ.

հաշվարկների ներկայացումը սահմանված ժամկետներից 2 ամսից ավել ուշացնելու դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ հաշվարկների ներկայացման օրենքով սահմանված ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար համապատասխան բյուջե չվճարված գույքահարկի գումարի 5%-ի չափով (բայց ոչ ավելի գույքահարկի ընդհանուր գումարից):

11. ՀՈՂԻ ՀԱՐԿԸ

Հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողերի մշտական և ժամանակավոր օգտագործողները: Վարձակալության պայմաններով օգտագործման (հողի սեփականատերերի, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողների կողմից իրենց հողերը վարձակալության պայմաններով) տրամադրված հողամասերի համար հողի հարկը գանձվում է վարձատուից:

Հողամասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքները հաստատող փաստաթղթեր են համարվում Քաղաքացիական և Հողային Օրենսգրքերով ու «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված փաստաթղթերը:

Ուշադրություն. Մինչև նոր Հողային Օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ մշտական էր համարվում այն հողօգտագործումը, որի համար որոշ-

ակի ժամկետ չի սահմանվում (պետական սեփականություն հանդիսացող հողերը մշտական օգտագործման էին տրամադրվում, մասնավորապես՝ պետական կազմակերպություններին, հիմնարկներին, հասարակական ու կրոնական կազմակերպություններին և պաշտպանության կարիքների համար՝ այդ սուբյեկտների գործունեության ամբողջ ժամանակահատվածում), իսկ պետական սեփականության հողերը ժամանակավոր օգտագործման էին տրամադրվում կարճատև (մինչև 3 տարի) և երկարատև (3-10 տարի) ժամկետով:

Նոր Հողային Օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահից մինչ այդ հողամասերի նկատմամբ մշտական և ժամանակավոր (կարճատև և երկարատև) օգտագործման իրավունք ունեցող անձինք (այդ թվում՝ մասնավորեցված /սեփականաշնորհված/ իրավաբանական անձինք) սահմանված կարգով հատկացված հողամասերի նկատմամբ ձեռք են բերել վարձակալության իրավունք՝ տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասարեցված տարեկան վարձավճարով և այդ հողամասերի գծով դադարել են համարվել հողի հարկ վճարողներ: Նշվածը չի տարածվում պետական և համայնքային հիմնարկներին, համատիրություններին և ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրած հողամասերի վրա՝ այդ անձինք իրենց անհատույց (մշտական) օգտագործման տրամադրված հողամասերի համար կրում են հողի հարկի պարտավորություններ, եթե չեն օգտվում հողի հարկի արտոնություններից:

Հարկվող օբյեկտները, հարկման բազան և դրույքաչափերը՝

Հողի հարկի տարեկան դրույքաչափը սահմանված է՝

ա) գյուղատնտեսական նշանակության հողերի համար դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամտի 15%-ի չափով,

բ) ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, կապի, տրանսպորտի, ռադիոհեռարձակման, հեռուստատեսության, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար՝

կադաստրային շրջանացման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ բնակավայրերի ներսում 1%-ի և բնակավայրերից դուրս 0.5%-ի չափով,

- ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար՝ տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի 1%-ի չափով:

Հարկման ենթակա մակերեսների մեջ մտնում են նաև շենքերով ու շինություններով զբաղեցված հողերը, դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները, ինչպես նաև օբյեկտների սանիտարա-պահպան, տեխնիկական և մյուս գոտիները:

Ուշադրություն. Հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում.

- գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝
 - համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասերի համար.

Կառավարության 03.07.1997թ. N237 որոշման 1-ին կետի «գ» ենթակետով հաստատված՝ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային միջին զուտ եկամուտն (ըստ մարզերի տարածքների և հողի գնահատման խմբերի),

- համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար.

քաղաքային համայնքներում՝ Կառավարության 28.09.1994թ. N462 որոշմամբ հաստատված հողերի կադաստրային զուտ եկամտի ժամանակավոր միջին չափերը,

գյուղական համայնքներում՝ Կառավարության 03.07.1997թ. N237 որոշման 1-ին կետի «գ» ենթակետով հաստատված գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային միջին զուտ եկամուտն ըստ մարզերի տարածքների (համայնքների) և հողի գնահատման խմբերի տվյալներից «Տնամերձ» տողի տվյալները՝ որպես յուրաքանչյուր համայնքի համար սահմանված գյուղատնտեսական հողերի (ոռոգելի վարելահողերի, իսկ դրանց բացակայության դեպքում՝ անջրդի վարելահողերի) կադաստրային գնահատման զուտ եկամտի միջին չափեր:

- ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝
 - համայնքների վարչական սահմաններից դուրս և համայնքների (քաչատությանը՝ Կառավարության 28.09.1994թ. N462 որոշման հավելվածում ընդգրկված համայնքների) վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար՝ Կառավարության 25.07.2002թ. N1101-Ն որոշմամբ սահմանված կարգով որոշված կադաստրային գները,

- քաղաքային համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի համար՝ Կառավարության 28.09.1994թ. N462 որոշմամբ (Կառավարության 10.11.1997թ. N503 որոշման խմբագրությամբ) հաստատված հողերի կադաստրային արժեքի ժամանակավոր միջին չափերը:

Հողի հարկի հաշվարկման համար կադաստրային գուտ եկամուտների ու կադաստրային արժեքների վերաբերյալ տեղեկությունները Կառավարության 10.10.2000թ. «Հողի սեփականատերերի, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողների հողերի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմիններ ներկայացնելու կարգի մասին» N629 որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևերով հարկային մարմիններին տրամադրում են Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի տարածքային ստորաբաժանումները:

Հողի հարկի պարտավորությունների առաջացումը և դադարումը՝

Հողի հարկը հաշվարկվում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքի ձեռքբերման (սեփականության իրավունքի կամ մշտական օգտագործման պայմանագրի պետական գրանցման) ամսվան հաջորդող ամսից և դադարում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից:

Հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնության իրավունք ձեռք բերած հարկ վճարողը հարկի վճարումից արտոնության չափով ազատվում է այն ամսից, երբ ծագել է արտոնության իրավունքը, իսկ հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնության իրավունքը դադարելու դեպքում հողի հարկն ամբողջությամբ հաշվարկվում է այդ իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից:

Ուշադրություն. Հողամասի նկատմամբ կազմակերպության իրավունքների (սեփականության իրավունք, օգտագործման իրավունք) ծագումը, փոխանցումը, փոփոխումը, դադարումը ենթակա են պետական գրանցման և այդ իրավունքները ծագում են պետական գրանցման պահից:

Հողի հարկի հաշվարկման կարգը՝

Կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը (ներառյալ) համայնք-

ների վարչական սահմաններում գտնվող հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի հողի հարկի հաշվարկները ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի հարկային տեսչություն, իսկ հաշվարկած հողի հարկի գումարները եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը վճարում են հողամասի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հողի հարկի հաշվարկները կազմակերպությունը ներկայացնում է իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչություն, իսկ հաշվարկած հարկի գումարները վճարում է պետական բյուջե: Լրացուցիչ (նոր) ձեռք բերված (հատկացված) հողամասի համար հողի հարկի հաշվարկները կազմակերպությունը ներկայացնում է սեփականության կամ օգտագործման իրավունքի ծագման պահից սկսած 1 ամսվա ընթացքում (այդ հաշվարկները ներկայացվում են առանձին՝ հաշվարկի վրա կատարելով «Նոր հատկացված հողերի համար» նշում):

Հաշվետու տարվա 1-ին և 2-րդ եռամսյակների (մինչև տարեկան հաշվարկի ներկայացումն ընկած վճարման ժամկետների) համար կազմակերպությունների կողմից հողի հարկը հաշվարկվում և վճարվում է յուրաքանչյուր եռամսյակում նախորդ տարվա համար հաշվարկված հողի հարկի գումարի 1/4-ի չափով, հաշվի առնելով նոր հատկացված հողերի համար հաշվարկված հարկի գումարը: 3-րդ եռամսյակի համար, երբ արդեն ներկայացվել է հաշվարկը, հարկի չափը որոշվում է որպես տվյալ տարվա համար հաշվարկված հողի հարկի գումարի 3/4-ի (9 ամսվա հարկի գումարի) և 1-ին կիսամյակի համար նույն կարգով հաշվարկված հողի հարկի գումարների տարբերություն: 4-րդ եռամսյակի համար հողի հարկի չափը որոշվում է տվյալ տարվա համար հաշվարկված հողի հարկի գումարից հանելով 9 ամսվա համար հաշվարկված հողի հարկի գումարը:

Հողի հարկի ճշտված հաշվարկների ներկայացումը հարկային մարմին հարկային օրենսդրությամբ նախատեսված չէ:

Հողի հարկի արտոնությունները՝

Հողի հարկից 100% ազատվում են՝

- բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, ինչպես նաև պետական արգելանոցները և արգելավայրերը, ազգային և ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները և պատմամշակութային նշանակության հողերը (բացառությամբ՝

վարձակալության և ծառայողական օգտագործման տրված հոդերի),

- բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն),
- մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին (պրոֆ-տեխ-ուսումնարաններին) և դպրոցներին կից ուսումնարտադրական և փորձարարական հողամասերը,
- նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր սորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում) դրանց տարածքը 0.1 հա և ավելին լինելու դեպքում,
- պետական անտառային ֆոնդի հողերը (բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության վարձակալության տրված հոդերի):

Հողի հարկից 50% չափով ազատվում են՝ գյուղատնտեսական և անտառտնտեսական գիտական կազմակերպությունները, գիտահետազոտական հիմնարկները և ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական, սերմնաբուծական, տնկարանային, տոհմային և սորտափորձարկման ձեռնարկությունները, կայանները և հենակետերը՝

Կառավարության կողմից հաստատված ցանկով այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական և ուսումնական, գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով:

Պատասխանատվությունն օրենքի պահանջները խախտելու համար՝

Օրենքի պահանջները խախտելու համար կիրառվում են հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր պատասխանատվության միջոցները:

12.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

Բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է: Վճարողներ են այն անձինք, որոնք իրականացնում են հետևյալ գործառույթները.

- Շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) վնասակար նյութերի արտանետում, որի դիմաց բնապահպանական վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում շրջակա միջավայր արտանետված վնասակար նյութերի ծավալի հիման վրա: Վճարը հաշվարկվում է.
- ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման յուրաքանչյուր տոննայի դիմաց,
- ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների յուրաքանչյուր տոննայի արտանետման համար,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող, Հայաստանի Հանրապետությունում գրանցված և շահագործվող ավտոմեքենաներից և մեխանիզմներից վնասակար նյութերի արտանետման դիմաց` ըստ շարժիչի հզորության (այս վճարը վճարվում է տարեկան մեկ անգամ` մինչև դրանց տարեկան տեխնիկական զննությունը),
- այլ պետություններում գրանցված Հայաստանի Հանրապետություն մուտք գործող կամ շահագործվող տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց` ըստ ավտոմեքենայի տեսակի և բեռնատարողության (վնասակար նյութերի արտանետման դիմաց այս վճարը վճարվում է Հայաստանի Հանրապետության տարածք դրանց մուտք գործելու պահին):
- Արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրում, որի դիմաց վճարը հաշվարկվում է ելնելով հաշվետու ժամանակաշրջանում աղբյուսներում

և արտադրական հարթակներում տեղադրված թափոնների ծավալներից և վտանգավորության դասից՝ դրանց տեղադրման յուրաքանչյուր տոննայի համար:

- Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրություն կամ ներմուծում.

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի հիման վրա և վճարվում է ներմուծելիս: Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է արտադրողը՝ իրացման շրջանառության հիման վրա և վճարում է հաշվետու ժամանակաշրջանում իրացված արտադրանքին համամասնորեն:

Ուշադրություն. *Բնապահպանական վճարների դրույքաչափերը սահմանված են առանձին օրենքով («Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին»):*

Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց պետական բյուջե վճարվող վճար է: Վճարողներ են այն անձինք, որոնք իրականացնում են հետևյալ գործառույթները.

- Ջրօգտագործում, որի դիմաց վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում բնական ջրադեյուրներից օգտագործման նպատակով անմիջապես վերցրած ջրի ծավալի հիման վրա, իսկ ձկնաբուծական և խեցգետնաբուծական գործունեություն իրականացնող վճարողները վճարի հաշվարկն իրականացնում են օգտագործված ջրի ընդհանուր ծավալի 5%-ի հիման վրա: Վճարը հաշվարկվում է՝
- մակերևութային (բացառությամբ՝ Սևանա լճից) ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար,
- Սևանա լճից ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար,
- խմելու համար ոչ պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի

- յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար:
- Պինդ օգտակար հանածոների, ստորերկրյա քաղքյրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանում, որի դեպքում վճարը հաշվարկվում է՝
 - ազնիվ մետաղների մարված պաշարների յուրաքանչյուր գրամի համար,
 - գունավոր և հազվագյուտ մետաղների մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար,
 - վառելիքաւներգետիկ հումքի մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար,
 - երեսպատման քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
 - շինարարական քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
 - լյանյութերի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
 - շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար,
 - գունագեղ քարերի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար,
 - մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար,
 - աղի և հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար:
 - Կենսապաշարների օգտագործում, որի դեպքում վճարը հաշվարկվում է՝
 - փայտանյութի (անտառանյութի) օգտագործման ծառի տեսակի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար,
 - արդյունագործական նպատակով բույսերի յուրաքանչյուր միավորի օգտագործման համար,
 - արդյունագործական նպատակով օգտագործվող պտուղների, հատա-պտուղների և ընկույզավորների յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար,

- կենդանիների տեսակների՝ գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով յուրաքանչյուր միավորի օգտագործման համար,
- գյուղատնտեսական՝ խոտհունձի նպատակով անտառային ֆոնդի տարածքների յուրաքանչյուր հեկտարի միանվագ (միանգամյա) օգտագործման համար,
- գյուղատնտեսական՝ արածեցման նպատակով անտառային ֆոնդի տարածքների օգտագործման համար՝ յուրաքանչյուր գլխի համար յուրաքանչյուր օրվա կտրվածքով:

Ուշադրություն. *Բնօգտագործման վճարների դրույքաչափերը սահմանված են Կառավարության 30.12.1998թ. «Բնօգտագործման վճարների դրույքաչափերի մասին» N864 որոշմամբ:*

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման կարգը՝

Վճարողների կողմից եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները 2 օրինակից ներկայացվում են բնապահպանական մարմին (գրանցման) մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 25-ը: Գրանցված հաշվարկ-հաշվետվությունների 2-րդ օրինակները վճարողները այդ ժամկետներին հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացնում են համապատասխան հարկային մարմին:

Հաշվարկ-հաշվետվությունները կարող են չներկայացվել, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքներ ներմուծողները, ինչպես նաև ավտոմեքենաներից, մեխանիզմներից և շարժիչավոր լողամիջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման մասով:

Վճարողները հաշվարկված եռամսյակային վճարները վճարում են յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող 2-րդ, իսկ տարեկան վճարները՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող 3-րդ ամսվա 1-ը:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների արտոնությունները՝

- Հայաստանի Հանրապետությունում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարից ազատվում են սոցիալական ապահովու-

- քյան մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները (այդ ավտոմեքենաների համար),
- այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավագան վնասակար նյութեր արտանետելու համար վճարից ազատվում են դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները, մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում փոխադրումներ իրականացնողները և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերը,
 - շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար վճարից ազատվում են Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ տեղափոխվող ապրանքները,
 - արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար վճարից ազատվում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք (սպառման թափոնների համար):

Պատասխանատվությունը օրենքի պահանջները խախտելու համար՝

- վճարումներն ուղայնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.2%-ի չափով (տույժը կիրառվում է ժամանակին չվճարված վճարի գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված /պակաս ցույց տրված/ վճարման օբյեկտի գծով վճարի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար /բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար/),
- վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուղայնելու դեպքում հաջորդ յուրաքանչյուր 15 օրվա համար գանձվում է տուգանք՝ վճարման ենթակա վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով (բայց ոչ ավելի այդ վճարի ընդհանուր գումարից),
- վճարը թաքցնելու կամ պակաս ցույց տալու (այսինքն՝ հաշվարկ-հաշվետվություններում վճարի գումարը ցույց չտալու, պակաս ցույց տալու կամ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ ներկայացնելու) դեպքում գանձվում է

թաքսված կամ պակաս ցույց տրված վճարի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով, իսկ խախտումն արձանագրվելուց հետո 1 տարվա ընթացքում վճարը կրկին թաքսնելու կամ պակաս ցույց տալու դեպքում նաև տուգանք՝ վճարի ամբողջ գումարի չափով (գործունեություն չիրականացնելու, ինչպես նաև վճարի օբյեկտ հանդիսացող գույք չունենալու դեպքում վճարողը ներկայացնում է հայտարարություն, որը համարվում է լիազոր և հարկային մարմիններ ներկայացվող փաստաթղթերի ամփոփ ձև):

Թաքսված (կամ պակաս ցույց տրված) վճարը և տույժերը (տուգանքները) բյուջե (պետական, համայնքի) են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

13. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ

Պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից պետական կամ համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է: Պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կառավարության լիազորած՝ հարկային մարմինը:

Պետական տուրքի դրույթաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ բազային տուրքի (1,0 հազ. դրամ) նկատմամբ:

Պետական տուրք վճարողներ են համարվում օրենքով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող անձինք, մասնավորապես՝

- դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից

տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար,

- նոտարական գրասենյակների կողմից նոտարական գործողություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, այդ մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար,
- քաղաքացիական կայության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կայության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման վկայականներ տալու համար,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար,
- հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար,
- պետական գրանցման համար,
- մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար,
- գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տուպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար,
- ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար,
- լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:

Պետական տուրքի վճարման պարտավորության դադարումը՝

Պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է՝ այդ պարտականության կատարումով, պետական տուրքի վճարումից

ազատումով, պետական տուրքի վերացումով (ֆիզիկական անձանց համար՝ նաև պետական տուրք վճարողի մահվան) դեպքում:

Տարեկան պետական տուրք վճարողների համար տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է մինչև սահմանված ժամկետի վերջին օրը տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերը (իրավունքները, թույլտվությունները, լիցենզիաները) սահմանված կարգով ուժը կորցրած ճանաչելու դեպքում, իսկ իրավաբանական անձանց համար՝ նաև լուծարման դեպքում:

Ուշադրություն. *Տարեկան պետական տուրքի պարտավորության դադարեցման դեպքերից բացի սահմանված են հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորության դադարեցման հետևյալ դեպքերը՝*

- ա) եթե մինչև հերթական (առաջիկա տարվա) տարեկան պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետի վերջին օրը իրավունքի, թույլտվության, արտոնագրի կամ լիցենզիայի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար վճարողը դիմում է ներկայացնում լիազոր մարմին, ապա՝ դիմումի հետագա բավարարման դեպքում (անկախ բավարարման ժամկետներից) հերթական (միայն առաջիկա տարվա համար) տարեկան պետական տուրքի պարտավորություն չի առաջանում.*
- բ) եթե իրավունքի, թույլտվության, արտոնագրի կամ լիցենզիայի գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար դիմումը լիազոր մարմին է ներկայացվում հերթական (առաջիկա տարվա) տարեկան պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետի վերջին օրվանից հետո, ապա՝ դիմումի բավարարման դեպքում հերթական (արդեն միայն տվյալ տարվա) տարեկան պետական տուրքի պարտավորություն չի առաջանում:*

Արտոնագրման, թույլտվության կամ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակն այդպիսին չհամարվելու դեպքում հերթական (առաջիկա) տարեկան պետական տուրքի պարտավորություն չի առաջանում:

Տարեկան պետական տուրքի պարտավորության կատարումը օրենքով սահմանված հերթական տարեկան պետական տուրքի գումարների (գումարը համարվում է վճարված բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից), ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար սահմանված տույժերի գումարների վճարումն է:

Արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում (բացառությամբ՝ կասեցված լինելու ժամանակահատվածում դիմումի համաձայն դրանց ուժը կորցրած ճանաչման դեպքերի) հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման անկախ դրանց գործողության կասեցման հիմքերից ու ժամկետներից:

Պետական տուրքի գանձումը՝

Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ: Պետական տուրքի հաշվարկման և գանձման նպատակով գործողությունների կատարման և ծառայությունների մատուցման պահ է ճանաչվում դրանց ավարտման պահը:

Պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող մի քանի գործողություններ միաժամանակ կատարելու կամ ծառայություններ մատուցելու դեպքում պետական տուրքը հաշվարկվում է յուրաքանչյուրի համար առանձին և փոխանցվում համապատասխան բանկային հաշվին:

Պետական տուրքը հաշվարկում և գանձում են օրենքով սահմանված ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձինք:

Պետական տուրքը ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դրվում է համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց վրա, իսկ գումարները կանխիկ գանձված (ստացված) լինելու դեպքում՝ դրանք ժամանակին բյուջե փոխանցելու պատասխանատվությունը դրվում է պետական տուրք գանձող մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի վրա:

Տարեկան պետական տուրքի վճարումը՝

Տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման

օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) տրման ամսաթվից ոչ ուշ:

Գործունեության արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու (բացառությամբ՝ տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքերի) մասին լիազոր մարմինների որոշումները վերադասության կամ դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում տարեկան պետական տուրքի վճարման ժամկետը երկարաձգվում է արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու որոշման ընդունման օրվանից մինչև այդ որոշումն անվավեր ճանաչվելու մասին ակտն ուժի մեջ մտնելու օրն ընկած ժամանակահատվածով:

Լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողության ժամկետը լրիվ տար(իներ)ով երկարաձգելու դեպքում դրանց տրման համար սահմանված տարեկան պետական տուրքը շարունակվում է վճարվել տարեկան պետական տուրքի գանձման և վճարման համար ընդհանուր կարգով:

Լիցենզիայի, արտոնագրի կամ թույլտվության գործողության ժամկետն օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառապես ոչ լրիվ տարով երկարաձգվելու դեպքում պետական տուրք գանձող մարմնի կողմից տարեկան պետական տուրքը ենթակա է համամասնորեն հաշվարկման և գանձման՝ հաշվի առնելով լիցենզիայի գործողության երկարաձգված ժամկետի ոչ լրիվ տարվա ամիսների թիվը (լիցենզիայի, արտոնագրի կամ թույլտվության գործողության ժամկետը ոչ լրիվ տարով կարող է երկարաձգվել բացառապես ամիսներով):

Ուշադրություն. Մինչև 28.01.2006թ. տարեկան պետական տուրքերի վճարումը յուրաքանչյուր տարվա համար կատարվում է մեկ տարվա ընթացքում, մինչև առաջին անգամ կատարված վճարման օրը:

Մեկից ավելի յուրաքանչյուր վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու համար տարեկան պետական տուրքը ենթակա է վճարման տվյալ լիցենզիայի տրման համար սահմանված պետական տուրքի դրույքաչափի 50%-ի չափով (բացառությամբ՝ շահումներ-

րով խաղերի կազմակերպման և խաղատան կազմակերպման գործունեության տեսակների /այդ դեպքում մեկից ավելի ցանկացած վայրի համար ևս պետք է վճարվի տվյալ լիցենզիայի տրման համար սահմանված տարեկան պետական տուրքի դրույքաչափի 100%-ի չափով/:

Եթե լիցենզավորված անձը պարտավոր է լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում, ապա մեկից ավելի վայրերում լիցենզավորման ենթակա նույն գործունեության իրականացման լիցենզիաներ ստանալու համար հայտերը միաժամանակ ներկայացնելու դեպքում հայտատուն կարող է ինքնուրույն ընտրել այն հիմնական լիցենզիան, որի համար տարեկան պետական տուրքերը ենթակա են գանձման (վճարման): Հայտատուի կողմից ինքնուրույն չընտրելու կամ լիցենզավորող մարմնին չհայտնելու դեպքում լիցենզավորող մարմնին իր հայեցողությամբ է որոշում հիմնական լիցենզիան, իսկ յուրաքանչյուր այլ վայրի ածանցյալ լիցենզիայի տրման համար ենթակա են գանձման (վճարման) առանձին տարեկան պետական տուրքերը:

Եթե լիցենզավորված անձն ունի հիմնական լիցենզիա և ածանցյալ լիցենզիա(ներ), հիմնական լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու կամ դրա տրման համար տարեկան հեթոսկան պետական տուրքը սահմանված ժամկետում չվճարելու հիմքով կասեցված համարվելու օրվանից հետո 3-օրյա ժամկետում լիցենզավորված անձը պարտավոր է ածանցյալ լիցենզիայի (դրանցից որևէ մեկի) համար կատարել տվյալ լիցենզիայի տրման համար սահմանված տարեկան պետական տուրքի դրույքաչափի 50%-ի չափով լրավճարում՝ ածանցյալ լիցենզիան (դրանցից որևէ մեկը) հիմնական համարվելու և հետագայում դրա համար տարեկան պետական տուրքի դրույքաչափի 100%-ով վճարումներ կատարելու համար: 3-օրյա ժամկետում լրավճարումը չկատարելու դեպքում լիցենզավորված անձի ածանցյալ լիցենզիան(երը) համարվում է (են) կասեցված 3-օրյա ժամկետին հաջորդող օրվանից:

Պատասխանատվությունը՝

Պետական տուրք գանձող պաշտոնատար անձանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով սահմանված ժամկետներում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները ենթակա են նրանցից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5%-ի չափով (հաշվարկված տույժի հետ միասին): Պետական տուրք գանձող պաշտոնա-

տար անձինք սահմանված ժամկետում բյուջե չգանձված պետական տուրքի գումարները, ինչպես նաև դրանց համար հաշվարկված տույժերը բյուջե են վճարում լիազորված մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում:

Պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման արտոնուքյուն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը, ինչպես նաև տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում, բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5%-ի չափով (հաշվարկված տույժի հետ միասին):

Պետական տուրքի չգանձված (չվճարված) գումարների, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժերի գանձումը կատարվում է դատական կարգով:

Ուշադրություն. Չվճարված հերթական տարեկան պետական տուրքերի գումարների վճարումն ուշացնելու համար տույժերի հաշվարկի դադարեցման դեպքերն են՝

- ա) լիցենզիաների, արտոնագրերի և թույլտվությունների համար սահմանված գործողության ժամկետներից շուտ դրանց գործողության դադարեցումը՝ լիցենզիայի գործողության դադարեցման օրվանից,*
- բ) լիցենզավորված անձի դիմումի հիման վրա (եթե այդ դիմումը հետագայում բավարարվել է) լիցենզիայի դադարեցումը՝ դիմումի ներկայացման օրվանից (եթե դիմումում նշված է դադարեցման ավելի ուշ ժամկետ, քան դիմումի ներկայացման օրն է, ապա տույժերի հաշվարկը դադարեցվում է դիմումում նշված ժամկետից, իսկ եթե դիմումում նշված է ավելի վաղ ժամկետ, քան դիմումի ներկայացման օրն է, ապա տույժերի հաշվարկը դադարեցվում է դիմումի ներկայացման օրվանից),*
- գ) արտոնագրման, թույլտվության կամ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակն այդպիսին չհամարվելը՝ համապատասխան օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից:*

Տարեկան պետական տուրքի գծով պարտավորությունները մարվում են տարեկան պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթում նշված վճարման նպատակին (լիցենզիայի համար և պարտավորության ժամանակահատված) համապատասխան:

Վճարումը հավաստող փաստաթղթում վճարման նպատակը (լի-
ցենզիայի համար և պարտավորության ժամանակահատված) նշված
չլինելու դեպքում վճարողին տրվում է 1-անգամյա բացառիկ հնարավոր-
ություն՝ վճարումից հետո 30-օրյա ժամկետում վճարման նպատակի
վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնելու լիազոր (հար-
կային) մարմին: Այդ դեպքում տարեկան պետական տուրքի գծով
պարտավորությունները մարվում են հայտարարությամբ նշված նպա-
տակին համապատասխան:

Վճարումը հավաստող փաստաթղթում վճարման նպատակը (լի-
ցենզիայի համար և պարտավորության ժամանակահատված) նշված
չլինելու և այդ ժամկետում գրավոր հայտարարություն չներկայացնելու
դեպքում վճարված տարեկան պետական տուրքի գումարների հաշվին
առաջին հերթին մարվում են տույժերի գծով պարտավորությունները,
ապա՝ հերթական տարեկան պետական տուրքի գումարները (ըստ
դրանց վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության):

Սահմանված ժամկետում գրավոր հայտարարություն չներկայաց-
նելու կամ ներկայացված հայտարարությունում նշված վճարման
նպատակը նոր հայտարարությամբ փոփոխելու դեպքում տարեկան
պետական տուրքի պարտավորությունները վերահաշվարկման ենթա-
կա չեն:

14. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

Տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապե-
տության օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դի-
մապ օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձ-
վող պարտադիր գանձույթ է: Օրենքով սահմանված առանձին դեպքե-
րում տեղական տուրքը կարող է գանձվել պարբերաբար:

Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապե-
տության օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ

պայմանավորված գործողությունների համար օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

Տեղական տուրքերի (վճարների) դրույքաչափերի սահմանումը՝

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին սահմանում է՝

ա) տեղական *տուրքերի դրույքաչափերը* (օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում)՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ,

բ) տեղական *վճարի դրույքաչափը*՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով:

Թաղային համայնքներում տեղական տուրքի դրույքաչափերի սահմանման վերաբերյալ առաջարկությունը համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է՝ խորհրդակցելով Երևանի քաղաքապետի հետ: Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի և տեղական վճարների *միասնական դրույքաչափեր*:

Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի (վճարների) դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Տեղական տուրքերի (վճարների) հաշվարկումը և գանձումը՝

Տեղական տուրքեր (վճարներ) գանձող մարմինների պաշտոնատար անձինք տեղական տուրքերի (վճարների) հաշվարկն իրականացնում և տեղական տուրքերը (վճարները) գանձում են նախքան այդ լիազորությունների կամ գործողությունների իրականացումը՝ ելնելով դրանց դրույքաչափերից:

Տեղական տուրքերի (վճարների) արտոնությունները՝

Տեղական տուրքերի (վճարների) արտոնությունները, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, կարող է սահմանել համայնքի ավագանին՝ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով տեղական տուրքը (վճարը):

Պատասխանատվությունը՝

Օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

**Ձեռնարկ
ՊԵՏԱԿԱՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՐԱԲԵՐՅԱԼ**

Էջադրուժը և ձևավորուժը
Ա. Հարությունյանի

Մինչտպագրական աշխատանքներ՝ «Գ-ԱՐ» ՍՊԸ
Տպագրությունը՝ «Է-Դ-ԻԹ՝ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 500